

**ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ**

**ԵՎ «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ»**

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԷՊՈՍԸ**

**Հայ հին և միջնադարյան գրականության  
և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի  
հոդվածների ժողովածու**

**ԵՐԵՎԱՆ – 2015**

## **Ժողովածուն տպագրության է երաշխավորել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի խորհուրդը:**

### **ՆԱԽԱԲԱՆ**

2015 թվականին աշխարհի առաջադեմ ու քաղաքակիրթ մարդկությունը հարգելու է 1915 թվականի երիտթուրքերի կազմակերպած հայաջինջ ցեղասպանության զոհ դարձած մեկ ու կես միլիոն հայերի հիշատակը: 1915-ին թուրքերի անողորմ յաթաղանը աշխարհի քարտեզից վերացրեց Արևմտահայաստանը և նրա բնիկ տերերին զրկեց կյանքից:

«Սասունցի Դավիթ» հերոսական էպոսը ձևավորվել է VIII-X դարերում, երբ հայ ժողովուրդը հանուն իր անկախության և ազգային պետության վերականգնման պայքարում էր արաբական լծի դեմ: Այդ պայքարի արդյունքում Մեծ Հայքի տարածքում հաստատվեց Բագրատունիների հայկական թագավորությունը, որի մայրաքաղաք Անին ստացավ տիեզերահոչակ պատվանունը:

Հովսեփ Օրբելին՝ Խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսը (1935), Հայաստանի գիտությունների ակադեմիայի առաջին նախագահը (1943-1947), աշխարհահռչակ արևելագետն ու հայագետը, Ռուսաստանի «Էրմիտաժ» հռչակավոր թանգարանի տնօրենը, աշխարհի շատ ակադեմիաների պատվավոր անդամը,

եղել է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի խմբագիրն ու մեծարժեք առաջաբանի հեղինակը:

1939 թվականին ողջ աշխարհում մեծ շուքով նշվեց «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման 1000-ամյա հոբելյանը: Հովսեփ Օրբելին այդ հանդիսությունների կազմակերպիչն ու կենտրոնական դեմքն էր: Նրա բացառիկ նվիրման շնորհիվ Լենինգրադի շրջափակման ժամանակ տարհանվել և պահպանվել են «Էրմիտաժում» գտնվող արվեստի եզակի գործեր, և այսօր դրանք ցուցադրվում են նաև ողջ աշխարհում: 1946-ին Նյուրենբերգյան դատավարության ժամանակ Օրբելին, որպես մեղադրող կողմի վկա, հզոր փաստերով մերկացրեց ֆաշիզմը: Մեծ հայագետ Ն.Մառի երևելի աշակերտը իր ուսուցչի հետ մասնակցել է Անիի ու Վանի ուրարտական բերդի պեղումներին: Բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով 1911 և 1912թթ. մի քանի ամսով մեկնել է Մոկս և նրա հարակից գավառները, տեսել Արևմտահայաստանն իր բնիկ հայկական բնակչությամբ: Գրառել է ժողովրդական առակներ, զվարճալի պատմություններ, վիպական տաղեր, քնարական երգեր, ոտանավորներ, առած-ասացվածքներ, հանելուկներ: Դրանք թարգմանել է ռուսերենի՝ կցելով Մոկսի բարբառի բառարան: Օրբելին զբաղվել է հայ ճարտարապետության, ամրոցաշինության խնդիրներով, ուսումնասիրել հայ միջնադարյան առակագրությունը: Հայաստանի ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ջանքերով 1959 թվականից լույս տեսնող և այսօր էլ շարունակվող «Հայ ժողովրդական հեքիաթների» I հատորի խմբագիրն ու առա-

ջաբանի հեղինակն է: Օրբելին նաև ժամանակակից հայ վիճակագրագիտության հիմնադիրն է: Զբաղվել է հայ միջնադարի նշանավոր պատմիչներ Եղիշեի, Ղազար Փարպեցու, Թովմա Արծրունու երկերի ուսումնասիրությամբ: Եղել է իրանագետ ու քրդագետ: Վիթխարի է Հովսեփ Օրբելու ծառայությունը արևելագիտության և հայագիտության բնագավառներում:

Այս ժողովածուն ներկայացնում է անխոնջ գիտնականի, հայ ժողովրդի մեծանուն գավակի «Սասունցի Դավիթ» էպոսին տված գնահատականները, որոնք նշանավորվեցին հայ էպոսագիտության բոլորովին նոր շրջափուլը:

*ԱԵԼԻՏՍԱ ԴՈԼՈՒՄԱՆՅԱՆ*

## ПРЕДИСЛОВИЕ

В 2015 г. прогрессивное цивилизованное человечество почитит память полутора миллиона армян, павших жертвами Геноцида 1915 года, организованного младотурками. В 1915 году безжалостный турецкий ятаган стер Западную Армению с карты мира и лишил жизни ее исконных владельцев.

Героический эпос «Давид Сасунский» сформировался в VIII-X веках, когда армянский народ боролся против арабского ига во имя своей независимости и восстановления национального государства. Вследствие этой борьбы в Великой Армении было основано Армянское Царство Багратидов, столица Ани которого получила почетное название «всемирно изветного» города.

Действительный член Академии наук СССР (1935 г.), первый Президент Академии наук Армении (1943-1947 гг.), всемирно изветный арменовед и востоковед, директор прославленного музея Эрмитажа России, почетный член многих академий мира Иосиф Орбели был редактором сводного текста эпоса «Давид Сасунский» и автором ценного предисловия к нему.

В 1939 г. во всем мире торжественно отмечался 1000-летиий юбилей создания эпоса «Давид Сасунский». Иосиф Орбели был организатором и центральным лицом этих торжеств. Благодаря его исключительной преданности своему делу во время блокады Ленинграда были эвакуированы и спасены уникальные произведения искусства, хранящиеся в Эрмитаже, которые сейчас представляются во всем мире. В 1946 г. во время Нюрнбергского процесса, Орбели, в качестве свидетеля

обвинения, разоблачил фашизм с помощью неопровержимых фактов. Вместе со своим великим учителем арменоведом Н. Марром он участвовал в раскопках Ани и урартской крепости Вана. С целью сбора этнографического материала в 1911 и 1912 гг. он на несколько месяцев поехал в Мокс и в сопредельные провинции, увидел Западную Армению и ее исконное армянское население. Он записал народные басни, забавные истории, баллады, пословицы-поговорки, загадки. Он их перевел на русский язык, сопроводив словарем моксского диалекта. Орбели занимался проблемами армянского зодчества и строительства фортификаций, изучал армянскую средневековую басенную литературу. Он стал редактором и автором предисловия первого тома серии «Армянские народные сказки», издающейся с 1959 г. по сей день усилиями Института археологии и этнографии НАН Армении. Орбели был также родоначальником современного изучения армянских лапидарных надписей. Он занимался исследованием трудов известных армянских историков Егише, Лазара Парпеци, Товма Арцруни. Он был иранистом и курдологом. Велики заслуги Иосифа Орбели в области востоковедения и арменоведения.

Настоящий сборник представляет оценки, данные неутомимым ученым, великим сыном армянского народа эпосу «Давид Сасунский», которые ознаменовали собой совершенно новый этап армянского эпосоведения.

*Аэлита ДОЛУХАНИЯН*

## PREFACE

In 2015 all the progressive and civilized humanity will commemorate the 1.500.000 victims of the Armenian Genocide of 1915 organized by Young-Turks. In 1915 the cruel Turkish yataghan removed Western Armenia from the world map and slaughtered its indigenous inhabitants.

The heroic epics *David of Sasun* was created in the 8<sup>th</sup> - 10<sup>th</sup> centuries, during the struggle of Armenian people against the Arab yoke for their independence and restoration of their national State. As a result of this struggle the Armenian Kingdom of Bagratids was founded in Greater Armenia and its capital town Ani was given the honorific title of ‘universally known’ town.

Hovsep Orbeli, member of the USSR Academy of Sciences (1935), first President of the Armenian Academy of Sciences (1943-1947), worldly known armenologist and orientalist, director of the Hermitage Museum of Russia, honorable member of numerous Academies of the world, was the editor of the combined text of *David of Sasun* and the author of its valuable preface.

In 1939 the 1000<sup>th</sup> anniversary of the epics *David of Sasun* was solemnly celebrated all over the world. Hovsep Orbeli was the organizer and the central figure of those manifestations. Thanks to his exceptional devotion to his duty, unique pieces of art were saved and evacuated from the Hermitage Museum during the Leningrad blockade and are now exhibited in the whole world. In 1946, during the Nuremberg trial, as witness of the accusation, Orbeli produced irrefutable facts to expose Nazism. Together with his famous tutor N. Marr he participated in the excavations of Ani and the Urartian

fortress of Van. In order to collect ethnographic documents, during 1911-1912 he spent several months in Moks and neighboring provinces, he saw Western Armenia and its indigenous Armenian population. He wrote down folk fables, funny stories, proverbs, sayings and riddles. He translated them into Russian, accompanying them with a glossary of the Moks dialect. Orbeli was interested in issues of Armenian medieval architecture and fortification construction, he studied Armenian fables. He was the editor and the author of the preface for the first volume of *Armenian Folk Tales*, which is published from 1959 up till now by the efforts of the Institute of Archeology and Ethnography of the Armenian National Academy of Sciences. Orbeli initiated modern studies of Armenian lapidary inscriptions; he studied works of famous Armenian historians Eghishe, L. Parpetsi and Thovma Artzruni. He was also interested in Iranian and Kurd studies. Great is the contribution of Hovsep Orbeli to Oriental and Armenian studies.

This miscellany presents appreciations given by the indefatigable scholar, the great son of Armenian people to the epics *David of Sasun*, which lay the beginning of an absolutely new stage in Armenian epos' studies.

*Aelita DOLUKHANYAN*





## ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր*

## ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ

### «ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳՆԱՀԱՏՈՂ

1874 թվականին Գարեգին Սրվանձտյանը հրատարակում է «Գրոց ու բրոց» ոչ ծավալուն երկը, որի Բ հատվածում «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով տպագրում է հայ ժողովրդական հերոսական էպոսի առաջին տարբերակը կամ պատումը: Հայ բանագիտության մեծ երախտավորը իրեն համեմատում է մեղվի հետ, որն օր ու գիշեր ծաղիկներից հավաքում է մեղրը, նրա նման էլ ինքը հավաքել է բանահյուսական գանձերը ու երկար որոնումներից հետո գտել մեծագույնը՝ «Սասունցի Դավիթ» էպոսը:

Հայ ազգային էպոսը տասնամյակներ անց հարստացավ նորանոր պատումներով ու արժանացավ միջազգային ճանաչման: Ահա այս վերջին իրողության համար մեծագույն դերակատարումն ունեցավ համաշխարհային հռչակի տեր

գիտնական, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, որի անունը իրավամբ դասվել է հայ ժողովրդի մեծանուն զավակների շարքում:

1939թ. նախկին Խորհրդային Միության մեջ մեծ շուքով նշվեց մեր ազգային էպոսի 1000-ամյա հորելյանը, լույս տեսավ համահավաք բնագիրը Հովսեփ Օրբելու խմբագրությամբ ու նախաբանով: Հետագայում այդ նախաբանը լույս տեսավ նաև առանձին գրքով:<sup>1</sup>

«Սասունցի Դավիթ» էպոսի կոթողային էությունը և նրա ազգային, գեղարվեստական արժեքը Հովսեփ Օրբելին նշել է ամենատարբեր առիթներով: 1950 թվականին ՀՍՍՌ ԳԱ տեղի ունեցած գիտաժողովի ժամանակ Հ.Օրբելին կարդացել է զեկուցում «Պալատական շինությունները X դարի Հայաստանում» թեմայով և վերստին խոսել է «Սասունցի Դավիթ» էպոսի մասին. „Это ведь тот период, когда Армения сбросила арабское иго,- начало X в. – тот самый период, когда стал складываться в единое, или более или менее единое целое, армянское национальный эпос „Давид Сасунский”, в значительной своей части говорящий о непримиримой борьбе за свою свободу и независимость, за свержение арабского ига, за изгнание арабов как правителей,- не как людей, а именно правителей,- с армянской земли”.<sup>2</sup>

---

<sup>1</sup> Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն:

<sup>2</sup> Ի.Ա.Օրբելի, Избранные труды в двух томах, т. II Ереван, 2002, с. 434.

1911 թվականին, երբ Հովսեփ Օրբելին մեկնում է Մոկս՝ քանահյուսական գրառումներ կատարելու, ի թիվս այլ ֆոլկլորային հյուսվածքների գրառում է երկու նշանավոր վիպական տաղեր, որոնք ինքն անվանում է բալլադներ: Դրանք են «Մոկաց Միրզան» և «Ասլան աղան»: Երկրորդ վիպական տաղը քննում է կյանքի ու մահվան փոխհարաբերության խնդիրները: Նա Ասլան Աղայի մարտահրավերը, նետված Գաբրիել հրեշտակին, համեմատում է Դավթի որդի Մհերի՝ հենց Աստծուն ուղղված բողոքի հետ, որով Մհերը ամենակարողի դեմ ընդվզում է իրական կյանքի անարդարությունների համար:

«Մասունցի Դավիթ» էպոսը մեկնաբանելիս Հ.Օրբելին «Նախաբանում» համառոտ ներկայացնում է այն երազանքները, որոնք հայ ժողովուրդը դրել է ազգային էպոսում: Էպոսի դյուցազունները մերժում են նվաճողական պատերազմ հրահրողներին և նրանց ողջ պայքարը հենց նման զավթիչների դեմ է, էպոսի գլխավոր հերոսը «ջերմ ու անաղարտ սիրտ ունի», օգնում է բոլոր անպաշտպան մարդկանց ու սխրագործություններ է կատարում հանուն իր հայրենիքի ու ժողովրդի բարօրության:

Էպոսագետը հանգամանալի խոսում է «Մասունցի Դավթի» պատմական միջուկի ու ձևավորման մասին: Նրա կարծիքով էպոսի Գագիկ թագավորի կերպարը պատմականորեն հավաստի է: Դա Գագիկ Արծրունին է, որը կառուցել է Ոստան քաղաքը, վերաշինել Աղթամար կղզու բերդերն ու ամրությունները և հայ ճարտարապետության սքանչելի հու-

շարձաններից մեկը՝ Ս.Խաչ եկեղեցին, իր հրաշք բարձրավանդակներով, որը վաղուց բոլորել է իր հազարամյակը:<sup>3</sup>

Օրբելու որոշ դիտարկումներ, եզրահանգումներ այսօր բացառիկ են գիտության համար: Արդեն Գարեգին Սրվանձտյանցը ճշգրտորեն էպոսի առաջին ճյուղի որոշ դրվագները կապում էր նախաքրիստոնեական ժամանակների հետ՝ հենվելով Աստվածաշնչի Հին կտակարանի, Մովսես Խորենացու «Հայոց պատմության» և Թովմա Արծրունու «Արծրունյաց տան պատմության» վրա: Օրբելին գրում է. «Նրանց մասին արված հիշատակությունները արտացոլումն են ասորական թագավորների այն բուն պատմական արշավանքների մասին, որոնք ուղղված էին մի երկրի դեմ, որը երկու-երեք դար հետո կոչվեց Հայաստան, իսկ այդ արշավանքների ժամանակ կրում էր Ուրարտու անունը»:<sup>4</sup>

Թովմա Արծրունու երկից հայտնի է դառնում խուրեցիների ապստամբության գլխավոր հերոսի անունը՝ Հովնան, որը սպանում է արաբական զորաբանակի գլխավորին՝ Յուսուֆին:

Օրբելին 1958-ին Մոսկվայում լույս տեսած «Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագրի ռուսերեն թարգմանության առաջաբանում կարծիք է հայտնում, թե այդ խիզախ խուրեցի Հովնանն էլ դարձել է մեր ազգային էպոսի գլխավոր հերոսի նախատիպը. „Быть может, вот этот безымянный герой (խոսքը Յուսուֆին սպանած Հովնանի մասին է – Ա.Դ.)

---

<sup>3</sup> «Մասունցի Դավիթ», Հայ ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ XXVI:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ XXXII:

из Хута в Сасуне или любой другой из его отряда, окутанный в народной памяти ореолом доблести, героической красоты, и послужил ядром для чудесной жемчужины армянского эпоса, образа Давида Сасунца".<sup>5</sup>

Խութեցիների սպստամբության և Յուսուֆ ոստիկանի սպանության մասին վկայում են նաև արաբական աղբյուրները. «IX դարի կեսին նրանց (իմա - արաբների) Մուսա իբն Ջորարա իշխանը միացավ հայոց Բագրատ իշխանի և Աշոտ Արծրունու հետ՝ ընդդեմ խալիֆի և մասնակից եղավ Յուսուֆ ոստիկանի սպանության գործին»:<sup>6</sup>

Օրբելին համոզված է, որ «Սասունցի Դավիթ» էպոսում առկա են հին հայերի նախապատմական ժամանակների հետքերը և տիեզերագիտական պատկերացումները: Սասունցի Դավիթը, որը հայ ժողովրդի լավագույն գծերն ու երագանքներն է մարմնավորում, ունենում է մի զավակ, որն արտասովոր ճակատագրի է արժանանում. նա մնում է անմահ. «Հերոսական էպոսը միշտ էլ խզվում է, եզրափակվում գորավոր կերպարով: Դյուցագունները կամ առանց որևէ հետք թողնելու զոհվում են, կամ դառնում քար, պարփակվում այդ քարի խորքում, սակայն երբեք չեն թողնում բազմաթիվ և բազմադարյան կյանքի ընդունակ ժառանգներ»:<sup>7</sup>

---

<sup>5</sup> „Давид Сасунский, Армянский народный эпос, Москва, 1958, с. 9.

<sup>6</sup> Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, կազմեց Հ.Թ.Նալբանդյան, Երևան, 1965, էջ 130:

<sup>7</sup> «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ XXXVI:

Ինչպես պարզ է դառնում Օրբելու հետազոտությունից, նա ծանոթ է այլ ժողովուրդների էպիկական գրույցներին, որոնց հետ պատմահամեմատական մեթոդով բաղդատում է «Սասունցի Դավիթ» էպոսը: Ջուզադրված են հունական էպոսի Անթեյը և հայկական դյուցազներգության Սանասարը. «Ջրով հարուստ, սակայն ցանքատարածություններով աղքատ Հելլադայում Անթեյն իր ուժն ստանում է հողից, իսկ Հայաստանի կյանքի պայմաններում, որտեղ ժողովրդի բարօրությունն ամբողջապես կախված է ոռոգումից, Սանասարի գործության աղբյուրը ջուրն է»<sup>8</sup>:

Միերի կերպարը էպոսագետը գուգահեռում է իրանական Միհր աստծու հետ, որը գրադաշտական կրոնի սրբազան մատյանում՝ Ավեստայում, կարևորագույն աստվածներից է: Օրբելին նույն Միերի կերպարում տեսնում է երկու Միերներ՝ առաջինը՝ Մեծ Միերը ծագող, հզոր արևն է, իսկ երկրորդը՝ Փոքր Միերը, հոգնած ու մայր մտնող արևը:<sup>9</sup>

Օրբելին Ձենով Օհանի կերպարում ևս տեսնում է երկնային շանթին, որի բարձրությունից խլացնող ձայնը լսվում է հեռուներում: Նրա կարծիքով Հայաստանում կոսմիկական ուժերի աստվածները ավելի վաղ են դարձել ավանդություն, քան դա եղել է հին Հունաստանում:

Էպոսագետը երկնային կոսմոզեն ուժերի կողքին տեսնում է նաև երկրային կենսական ուժերը: Երկրային ուժի մարմնացում է արտատեր պառավը, որը հիշեցնում է գերմա-

---

<sup>8</sup> Նույն տեղում, էջ XLIX:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ LI:

նացիների Էրդային և հույների Դեմետրեին՝ մայր հողին: Արտատեր պառավը միակն է ողջ էպոսում, որին մտահոգում է վարուցանքը, և նա Դավթին կշտամբում է իր կորեկի արտը տրորելու և նրանում լոր ու ճնճղուկ որսալու համար:

Հետաքրքիր ձևով Օրբելին էպոսի հերոսների կոսմիկական գծերը և երկրային ու մարդկային հատկանիշները գուգորդելով ներկայացնում է նրանց երկվությունը: Մի կողմից սովորական ընթերցողին հասկանալի էպոսի կերպարներ՝ իրենց մարդկային, իրական, կենդանի գծերով, մյուս կողմից նախնական ժամանակների հայ մարդու տիեզերական պատկերացումներ մարմնավորված էպոսի գործող հերոսների անձնավորումներ: Սրանք գծեր են, որոնք հասկանալի են միայն նեղ և հմուտ մասնագետներին:

Ընդհանրապես Օրբելին հատուկ շեշտում է հայկական էպոսի հերոսների երկրպագումը աշխատավոր մարդուն: Էպոսագետի այս բնութագրականը չափազանց դիպուկ է համարում մեր ազգային էպոսի ֆրանսերենով թարգմանիչը՝ Ֆրեդերիկ Ֆեյդին. «Նրանց բնավորության ժողովրդական բնույթը սրանով չի ավարտվում: Նրանք պարզությամբ տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք են մեկնում հոգնած գեղջուկներին, նույնիսկ եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են: Նրանց համեստությունն այնքան մեծ է, որ ինչպես Օրբելին է նկատել Երևանի հրատարակության առաջաբանում. «Այս չորս հերոսների անունները ժո-

ղովրդի հիշողության մեջ չեն աղարտվել ու խճողվել ոչ մի տիտղոսով կամ պատվավոր կոչումով»<sup>10</sup>:

Բավականին մանրամասն Օրբելին բացատրում է «Սասունցի Դավիթ» էպոսի ժողովրդայնությունը: Էպոսի մեկնության այս հատվածը խիստ ընդդիմախոսություն է բուրդայն հետազոտողներին, որոնք մեր ազգային էպոսը կապում են ազնվականության հետ: Օրբելին բացատրում է այս տեսակետի անհիմն լինելը: Անմտություն է Սասնա դյուցազունների նախատիպերը որոնել հայ ժողովրդի պատմության իշխանական դասի որոշակի դեմքերի մեջ: Բնականաբար իր ազգային հերոսին ժողովուրդը բարձրացնելու էր ազնվականների աստիճանին: Դա ժողովրդի սիրո դրսևորման հատուկ ձև է: Չմոռանանք, որ ամեն սիրասուն մոր համար իր որդին և՛ իշխան է, և՛ թագավոր: Ահա այդպիսի ազնվագարմ դեմքեր են նաև Սասնա դյուցազունները. «Եկեք Դավթին մատուցենք իրեն և մյուս դյուցազուններին վայել հարգանք ու պատիվ, առանց նրա գլխին հագցնելու իշխանական խույրը, որից հերոսը խորշում էր իր կենդանության օրով»:<sup>11</sup>

Օրբելին «Սասունցի Դավիթ» էպոսի մեծագույն արժանիքներից է համարում Սասնա դյուցազունների ազնվությունը, նրանց հատուկ հավատարիմ լինելը և խաղաղասիրությունը. «Ճշմարտացիություն – ահա այն հիմնական գիծը, որով ժողովուրդն օժտում է իր հերոսներին»:<sup>12</sup>

---

<sup>10</sup> Ա. Դուրխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 183:

<sup>11</sup> «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ XXXIX:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ XLIV:



Բոլոր ժողովուրդները երազում են Մեսիայի հայտնվելը, բարօրության տիրապետությունն իրենց կյանքում տեսնելը: Հայ ժողովրդի համար յուրօրինակ Մեսիա է Ագոստինոսը՝ փակված Մհերը, որի դուրս գալուն հավատում և սպասում է հայ ժողովուրդը: Եզնիկ Կողբացին հեգնում է որոշ հայերի, որոնք սպասում են Արտավազդ արքայի Մասիսի բանտից դուրս գալուն:<sup>13</sup> Օրբելին տարբերություն է տեսնում փակված Արտավազդի և Մհերի միջև՝ վերջինիս համարելով հայ ժողովրդի սիրելին ու նրա նվիրական երազանքների կրողը:

Մանրամասն գիտական մեկնաբանման ենթարկելով «Սասունցի Դավիթ» էպոսը՝ Օրբելին այն դասում է մարդկության երբևէ ստեղծած լավագույն էպոսների թվին, որովհետև նրանում հիանալի ձևով ներկայացված է հայ ժողովրդի դարավոր իմաստությունը:

Հետաքրքիր է, որ հայ ժողովրդի պատմական անցյալին քաջատեղյակ Դերենիկ Դեմիրճյանը «Սասունցի Դավիթ» էպոսին նվիրված իր հոբելյանական հոդվածն անվանել է՝ «Սասունցի Դավիթը» որպես հայ ժողովրդի պատմություն և փիլիսոփայություն: Նա «Սասունցի Դավիթ» էպոսը կապում է հայ պատմության հնագույն ժամանակների հետ՝ հատկապես Հայկի կերպարի հետ. «Հայկ և Բել» վեպի նմանությունը «Սասունցի Դավիթին» ակներև է սյուժետային գծով և ոգով<sup>14</sup>:

---

<sup>13</sup> Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Երևան, 1970, էջ 81:

<sup>14</sup> Տե՛ս «Սասունցի Դավիթ», Հոբելյանական ժողովածու նվիրված էպոսի 1000-ամյակին, Երևան, 1939, էջ 65:

Ֆրեդերիկ Ֆեյդին չափազանց բարձր է գնահատել «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը, այն կազմողների հմտությունը և Հովսեփ Օրբելու հրաշալի հետազոտությունը: Նա հայ ազգային էպոսը համարել է աշխարհի ամենախաղաղասեր էպոսը և հույս է հայտնում, թե նրա ֆրանսերեն տարբերակը «հնարավորություն կտա Արևմուտքի ընթերցողին վայելելու այս հոյակապ էպոսի համն ու քաղցրությունը»:<sup>15</sup>

---

<sup>15</sup> Ա.Դուրյանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, էջ 187:



## ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ

*Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

### ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ՏԱՐԲԵՐԸ «ՄԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

Բազմադարյան բանավոր գոյությունից հետո՝ 1874 թ. Գարեգին Սրվանձտյանցի կողմից առաջին տարբերակի հրատարակումից ի վեր, էպոսը թևակոխեց իր կյանքի նոր՝ գիտական փուլը: Վիպերգի նկատմամբ գիտական համակարգված մոտեցումը հնարավորություն տվեց բազմակողմանիորեն քննել էպոսը, լրացնել-համակարգել ամբարած հսկայական նյութը, խոսել էպոսի ժանրային հատկանիշների և բանահյուսական այլ ժանրերի հետ նրա հարաբերակցության մասին:

Մանուկ Աբեղյանը խնդիրը գիտականորեն հիմնավորում է «Հայ ժողովրդական վեպը» ուսումնասիրության «Հե-

քիաթ եւ վեպ» ենթագլխի մեջ<sup>1</sup>: Երկու ժանրերի հարաբերակցությանը գիտնականն անդրադառնում է նաև «Սասնա ծռեր»-ի գիտական առաջաբանում. «Մեր վեպի սյուժեն հարուստ է: Այստեղ մեր առաջ ծավալվում են և՛ հեքիաթային սյուժեներ. և՛ մոտիվներ, և՛ առասպելներ, և՛ դիցազնական սխրագործություններով լի երգեր և զրույցներ, և՛ պատմական իրական միջադեպեր»<sup>2</sup>: Հ. Օրբելին կարևորում է էպոսի առասպելաբանական հիմքը. ««Սասունցի Դավիթ» էպոսում... արտացոլված են թե՛ դիցաբանական ու կոսմոգոնիայի առավել լիակատար, ծավալուն պատկերը, թե՛ առասպելաստեղծության զարգացման փուլերը»<sup>3</sup>, իսկ «Էպոսի առասպելաբանական կողմը իր մի քանի առանձնահատկություններով հնարավորություն է ընձեռում առաջ քաշելու տարբեր ժողովուրդների հնագույն կուլտուրական կապերի հարցը»<sup>4</sup>: Հեքիաթին բնորոշ տարրերի առկայությունը էպոսի տարբեր պատումներում և դրանց ներթափանցման որոշ պատճառներ մեկնաբանում է Ա. Սահակյանը<sup>5</sup>: Շահեկան զուգահեռներ արված են Ս. Հարությունյանի «Հայ առասպելաբանություն» աշխատության մեջ<sup>6</sup>: Էպոսի և հեքիաթի կապի մասին ակ-

---

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, Արտասպուած «Ազգագրական հանդէպից», Թիֆլիս, 1908, էջ 27-32:

<sup>2</sup> Սասնա ծռեր, Խմբագրեց պրոֆ. դր. Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մ.-Օհանջանյանի (այսուհետև՝ Սասնա ծռեր, Ա), Երևան, 1936, էջ ԼԶ.:

<sup>3</sup> Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1959, էջ 110-111:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 135:

<sup>5</sup> Ա. Սահակյան, «Սասնա ծռերի» պատումների քննական համեմատություն, Երևան, 1975:

<sup>6</sup> Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 167-178:

նարկում է նաև Ա. Դոլուխանյանը. «Մեր ազգային էպոսում տեսնում ենք բանահյուսական այլ տեսակների առկայությունը. սիրո և կարոտի երգեր, հեքիաթներ, առած-ասացվածքներ»<sup>7</sup>:

Հրաշապատում հեքիաթների ընդհանուր տարածում գտած պոեմների և էպոսի համադրական քննության փորձ է Թ. Հայրապետյանի «Խորհրդանշային ցուցիչները հայ ժողովրդական հեքիաթներում և վիպական բանահյուսության մեջ» դոկտորական ատենախոսության առանձին գլուխը (Երևան, 2014, անտիպ)<sup>8</sup>:

Ժամանակակից էպոսագիտության մեջ նկատելի է վիպերգում առասպելաբանական տարրերի ուսումնասիրության նկատմամբ<sup>9</sup> աճող հետաքրքրություն, որի արդյունքում առասպել-հրաշապատում հեքիաթ-էպոս հարաբերակցությունը դեռևս նորանոր զուգահեռներ ի հայտ կրերի<sup>10</sup>:

Էպոսի պատումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ասացողներն իրենք ժանրային սահմաններ չեն դրել

---

<sup>7</sup> Ա. Դոլուխանյան, Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 2008, էջ 88:

<sup>8</sup> Հիմնական դրույթները տե՛ս Թ. Հայրապետյան, - «Վիպասանքի» հնագույն առասպելների դրսևորումները «Մասնա ծոեր» դյուցազնավեպում և հայկական հրաշապատում հեքիաթներում, «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ), 2008, հմր. 2, էջ 145:

<sup>9</sup> Էպոսի առասպելաբանական հիմքերի առաջնայնության վերաբերյալ էապես տարբեր էին Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի մոտեցումները. Աբեղյանը կարծում էր, որ առասպելաբանական արձագանքները էպոսում «եկամուտ տարերք» են (տե՛ս Ս. Աբեղյան, Երկեր, հ. Է., Երևան, 1975, էջ 70-75), իսկ Ս. Հարությունյանը՝ հակառակը (տե՛ս Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 178):

<sup>10</sup> Այդ են վկայում «Հայ ժողովրդական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» թեմայի շրջանակներում կազմակերպված միջազգային գիտա-ժողովները:

հեքիաթի և էպոսի միջև: Դրա պատճառն այն է, որ ժանրային մի շարք հատկանիշներ ընդհանուր են թե՛ էպոսի, թե՛ հեքիաթի համար, և շատ ասացողների կողմից էլ ասվել են որպես հեքիաթ: Էպոսը հիմնականում ասացողների շրջանում հայտնի է «Տավթի խեքիաթ» ձևով, սակավ դեպքերում կոչում են «պատմություն» կամ պարզապես չեն բնորոշում: Նախքեռու աշակերտ՝ Խապոյենց Ջատիկը պատումը հիշատակում է որպես «նաղլ»: Պատումի գրառող Բագրատ Խալաթյանցի ծանոթագրությունն անմիջականորեն կապվում է քննվող հարցի հետ. «Նաղլը ժողովրդի տեսակետով ճշգրիտ անցքի պատմություն է (= ռուս. быль, былина), որով և զանազանվում է «հեքիաթից», իբրև ճշմարտությունից զուրկ ավանդություն»<sup>11</sup>: Նկատենք, որ «նաղլ» բնորոշումն առավել հարագատ է մոկացի ասացողներին:

Երկու ընտիր ասացողների՝ Թամո Դավթյանի և Մանուկ Թորոյանի բնորոշումները, սակայն, էապես տարբերվում են նախորդներից և հետաքրքիր են հեքիաթ-էպոս զուգահեռների քննության առումով: Թամո Դավթյանը պատմելիս հաղորդել էր, թե «Տավթի բաղմունքներ... եղելություն է», «Դաւթի մասին գրքերից է քաղած»<sup>12</sup>: Հեքիաթի նկատմամբ ասացողի բացասական վերաբերմունք ենք տեսնում Մանուկ Թորոյանի ակնարկում. «Դավիթի պատմութենը հեղքիաթնաղլ չէ, պատմութեն ա եղելութեան ա: Հեքիաթ ընդուր

---

<sup>11</sup> Սասնա ծռեր, Ա., էջ 58:

<sup>12</sup> Սասնա ծռեր, հ. Բ, Առաջին մաս, Խմբագրեց ակ. Մ. Արեղյան, աշխատակցությամբ պրոֆ. Կ. Մ.-Օհանջանյանի, Երևան, 1944, էջ 156:

կ'ըսենք, որ սուտ բան կա, եղիկ հեքիաթ չէ, եղելութեան ա, պատմութեն, ժողովուրդը զրուցեր ա, մի քիչ բան ա եվելցրել, ամա եղելութեն ա: Մարդիկ կ'ըսեն Դավիթի պատմութենը ուղիղ ա, բայց եվելցրել են, հիմքը կա, ամա եվելցրել են, ճոխացրել են: Մի բան, որ մարդ կ'ըսէ, եթէ հիմք չկա, չի կրճնա սուտ ըսել, եղպեսդ ճոխացնել»<sup>13</sup>: Ուրեմն, այն, ինչ անիրական, «սուտ» բան էր, էպոսին հարիր չէր ու ասացողների համար՝ օտար, և դա հստակ գիտակցվում էր:

Արդ, ինչպես է, որ այդ մոտիվներն այնուամենայնիվ հայտնվում են էպոսի տարբերակներում: Այդ անցումը պետք է բացատրել էպոսի զարգացման օրինաչափություններով (չբացատրելով ասացողի գործոնը): Հրաշապատում հեքիաթները մեծ մասամբ ծագում են առասպելներից<sup>14</sup>, էպոսի հիմքում նույնպես առկա են առասպելաբանական շերտեր<sup>15</sup>: Հատկապես հիշատակելի են վիշապամարտերի և կատարածաբանական առասպելի հետքերը էպոսում<sup>16</sup>:

Հեքիաթային մոտիվների անցումը վեպին դիպուկ կերպով բացատրել է Ա. Սահակյանը. վիպական ընդհանուր հյուսվածքի մեջ հեքիաթային մոտիվները ստանում են վիպական խառնվածք, սերտաճում են վեպին, նրանց մուտքը վեպ *չի բխում վեպի ներքին պահանջունքից և կապ չունի*

---

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 250:

<sup>14</sup> Տե՛ս Ա. Հարությունյան, Բանագիտական ակնարկներ, «Առասպելի փոխակերպումը հեքիաթի» ենթագլուխը, Երևան, 2002, էջ 162-169:

<sup>15</sup> Այդ գուգահեռները մանրամասնորեն դիտարկվել են Գ.Սրվանձոյանցի, Հ. Օրբելու, Մ. Աբելյանի և այլ էպոսագետների կողմից:

<sup>16</sup> Ա. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 168-178, 452-463:

*նրա ժանրային նկարագրի հետ:* Խնդիրը փոխվում է, երբ այդ մոտիվները վիպականանում են, այսինքն՝ պատմական և աշխարհագրական երանգավորում է լինում, վեպը «հարդարում է» հեքիաթի մոտիվները, հարմարեցնում իր կառուցվածքին, ուստի հեքիաթի և էպոսի զուգահեռները պետք է հիմնավորել տարբեր հարթություններում. ընդհանուր՝ ժանրային և մասնավոր՝ առանձին պատումների սյուժետային զարգացման գծին զուգընթաց:

Շատ նմանություններ ունենալով հանդերձ հրաշապատում հեքիաթն ու էպոսը բոլորովին չեն նույնանում և դրսևորում են հետևյալ տարբերակիչ հատկանիշներ.

1. էպոսի հերոսները գործում են պատմական կոնկրետ միջավայրում, իսկ հրաշապատում հեքիաթը չունի կոնկրետացված միջավայր, եթե անգամ կան աշխարհագրական ինչ-ինչ անվանումներ, դրանք նույնպես շատ ընդհանուր են:

2. էպոսի սյուժեն ունի շեշտված ազգային դիմագիծ, այնինչ հեքիաթի սյուժեն թափառիկ է և հեշտությամբ յուրացվում է տարբեր ազգերի կողմից:

3. Հրաշապատում տարրը մասնակի բացառություններով նվազագույնի է հասցված էպոսում. անգամ եթե ասացողը զգացել է հրաշքի գործության առկայությունը և միաժամանակ պատմում է այնպես, ինչպես լսել է, իր ռացիոնալ բացատրությունն անպայմանորեն տալիս է՝ հարթեցնելու էպոսի կառույցը խաթարող հրաշքի առկայությունը, որը բացատրվում է ժողովրդի «կենդանի հավատքով». այսպես՝ Դավթի խաչ-պատերազմի գործության մասին հիշատակելով՝



ասացողը հավելում է. «Էն ժամանակ արդար մարդ էին, ինչ մուրազ ունէին Աստուած կը կատարէր»<sup>17</sup>: Այդպես չէ հրաշապատում հեքիաթում. այստեղ ամեն ինչ ենթարկվում է հրաշքի տրամաբանությանը:

Հերոսի դյուցազնական էությունից պատմականացման անցման ճանապարհին արտահայտվում է նրա գործառույթի փոփոխությամբ, որի ուսումնասիրությամբ զբաղվել է Հ. Համբարձումյանը. «Նոր գործառույթների առաջացումը պայմանավորված է նաև էպոսի հերոսների պատմականացման փորձի հետ... Վիպական աշխարհը «մանրացմանն» ու կենցաղայնացմանը զուգահեռ զրկվում է հերոսական պաթոսից... հերոսը դադարում է հերոս լինելուց»<sup>18</sup>:

Այսպիսով՝ թե՛ հեքիաթը, թե՛ էպոսը բանահյուսական երկեր են, որոնց ձևավորման մեջ էական դեր ունի առասպելաբանական հիմքը, դրանով է պայմանավորված հրաշապատում հեքիաթի մի շարք մոտիվների առկայությունն էպոսում, հրաշապատում հեքիաթի հերոսի գործառույթունները բնորոշ են նաև վիպական հերոսներին (մասնակի բացառություններով), սակայն այն տարբերությամբ, որ դրանք աստիճանաբար զրկվում են առասպելաբանական-հրաշապատում տարրից՝ տեղափոխվելով պատմական-կենցաղային դաշտ:

Էպոսի և հրաշապատում հեքիաթի հարաբերակցությունը դիտարկելի է մի քանի հարթություններում, որոնցից յու-

---

<sup>17</sup> Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական վեպը, էջ 28:

<sup>18</sup> Հ. Համբարձումյան, - Վիպական հերոսների գործառույթների փոխակերպումը, «Բանբեր Երևանի համալսարանի»(հասարակական գիտություններ/ բանասիրություն), (135)2, Երևան, 2011 էջ 36-37:

րաքանչյուրն իր պարունակած հարուստ նյութով կարող է դառնալ առանձին ուսումնասիրության առարկա.

1. Կառուցվածքային ընդհանրություններ հեքիաթի և էպոսի միջև. խոսքը կայուն կառույցների մասին է. սկիզբ, ավարտ, բանաձևային կաղապարներ և այլն, որոնք նույնությամբ դրսևորվում են երկու ժանրերում:

2. Մոտիվների ընդհանրություններ, որոնցից բխում են նաև տարբեր սյուժետային զուգահեռներ. գործրինակ՝ հերոսների ջրային ծնունդի, անապական հղիության, ամուսնության և այլ մոտիվներ:

3. Գործող անձերի, իրերի, երևույթների, թվերի ընդհանրություններ. վիշապներ, հրեղեն ձի, թուր, պատավներ, առյուծ, մատանի, 40, 7 թվերը և այլն:

1. Կառուցվածքային ընդհանրություններ հեքիաթի և էպոսի միջև.

Հեքիաթի կառուցվածքային կարևորագույն առանձնահատկությունը նրա կայուն սկիզբն ու կայուն ավարտն է: Այդ հատկանիշը հիմնականում էպոսին բնորոշ չէ, քանի որ նման սկիզբն ազդարարում է անորոշ ժամանակ, այն դեպքում, երբ էպոսում ժամանակը կոնկրետացվում է ողորմիների միջոցով: Մակայն էպոսի որոշ տարբերակներ, այնուամենայնիվ, ձևավորված են որպես հեքիաթ. ունեն հեքիաթին բնորոշ կայուն սկիզբ և կայուն ավարտ, սակայն չունեն ողորմիներ: Դրանք թվով երեք այն տարբերակներն են (հմր. 3, 7, 44), որոնք ներկայացնում են միայն «Մանասար և Բաղդասար» ճյուղը՝ դրսևորելով կառուցվածքային անկախություն և

ավարտվածություն: Կռապաշտ-խաչապաշտ հակադրությունն էպոսի մի շարք տարբերակներում արտահայտված է հրաշապատում հեքիաթին բնորոշ ոճով: «Հենց առասպելական-հեքիաթային մոտիվներով կազմված միջադեպերի ու այլ տարրերի առատությունն է, որ հիմք է ստեղծել «Սանասար և Բաղդասար» ճյուղի առանձին, անկախ գոյությանը»,<sup>19</sup>- եզրակացնում է Ա. Սահակյանը<sup>19</sup>: Ինչի պատճառով էլ այս պատումները մյուսներից տարբեր կերպով են ձևավորել կայուն սկիզբ և ավարտ:

Սկիզբը՝

Կար, չկար մի ժամանակ՝  
Մի կռապաշտ թագավոր կար,  
Մի խաչապաշտ թագավոր կար<sup>20</sup>:

Շատ, քիչ, Աստված գիտե,  
Մե քանի տարի վրեն ընցավ<sup>21</sup>:

Ավարտը՝

Յոթ օր խարսնիս արիցին,  
Քեֆ-ուրախություն արիցին,  
Կեր ու խում արիցին,  
Մե մի բան չտվեցին,  
Համա Աստծուց իրե խնձոր իրե՝

---

<sup>19</sup> Ա. Սահակյան, նշվ. աշխ., էջ 103-104:

<sup>20</sup> Սասնա ծռեր, Ա., էջ 127:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 129:

Մեկ ականջ արողին, մե չարողին, մեկ ասողին:  
Էդոնք էնդեղ խասան իրանց մուրազին,  
Դուք էլ էստեղ խասանիք ձեր մուրազին<sup>22</sup>:

1933թ. «Արարատ» ամսագրում լույս է տեսնում հրաշապատում հեքիաթին շատ մոտ էպոսի պատումներից մեկը «Տղայ Դաւթի եւ աղջիկ Խանդուրի հեքիաթը» խորագրով: Սա Մոկաց և Մշո պատումներից ավելի ուշ ստեղծված պատում է: Պատմական անձինք փոխարինված են փահլևաններով, աշխարհագրական որևէ անուն պահպանված չէ, կարևորություն տրված է փահլևանների դեմ մղած Դավթի կռվին, կրոնական տարրը նույնպես բացակայում է: Հրատարակիչ Ն. Քարամյանն ուշագրավ մեկնաբանություն է անում. Սա «ոչ դիւցազներգութիւն է և ոչ հեքիաթ, այլ թէ հեքիաթ և թէ դիւցազներգութիւն, ուստի եւ մէկի տարերքը փոխարինում են միւսին, բայց այդ փոխանակութիւնը դեռ չէ կատարուել եւ վերջացել»<sup>23</sup>:

2. Մոտիվների ընդհանրություններ, որոնցից բխում են նաև տարբեր սյուժետային գուգահեռներ.

Էպոսի հիմքում ընկած է վիպական ուրվագիծ, որի շուրջը ծավալվում են վեպի գործողությունները. ա. Կռապաշտ-խաչապաշտ, որոնք ներկայացնում են հակառակորդ երկրներ, կռվի իրադրություն, բ. Ամուսնություն (բռնի կամ սիրո հիման վրա), գ. Հզոր ժառանգ (հիմնադիր, օտար նվա-

---

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 135-136: Նման օրինակներ տե՛ս նույն տեղում էջ 307, 557, 560:

<sup>23</sup> «Հայրենիք», 1933, հմր. 3, էջ 424:

ճողներից ազատող), դ. Շինարարություն<sup>24</sup>: Այս մոտիվներից էլ բխում են նաև վիպական հերոսի գործառույթները. չորս սերունդներն էլ ունեն թե՛ հերոսական, թե՛ մշակութային հերոսներին բնորոշ հատկանիշներ. արտասովոր՝ ջրային ծնունդ, մանկական չարություններ, մշակութային գործունեություն, տարբեր սխրանքներ, բախում հոր հետ և ողբերգական վախճան<sup>25</sup>:

Երկվորյակ եղբայրների արտասովոր ջրային ծնունդը<sup>26</sup>. ջրի հրաշագործ էությունը զգալի է ողջ էպոսում: Ջրային ծննդի հեթանոսական առասպելին միացել է նաև անասական հղիության մոտիվը: Էպոսի չորս ճյուղի հերոսներն իրենց կենսական էներգիան ստանում են ջրից, իսկ այդ տարերքը խորհրդանշող Ծովինարը (Ծովյալ, Ծովյան) պատմականացել դարձել է խաչապաշտ Գագիկ (Խաչիկ) թագավորի դուստր: Ջրային ծնունդի հետ անմիջական կապ ունի Ծովինարը ոչ միայն որպես երկվորյակ դյուցազունների մայր, այլև առասպելական հերոսուհի. հրաշապատում որոշ հեքիաթներ Մ. Աբեղյանի վկայությամբ ամպրոպային առասպելի հետ որպես որոտի դյուցազնուհի ցարդ պահպանել են Ծովինարի անվան հիշատակությունը. «Էնենց մթնում են սար ու ձոր... Ծովինարն էնենց ա խաղում, որ կասես, թե ուզում ա

---

<sup>24</sup> Ա. Սահակյան, նշվ. աշխ., էջ 82-83:

<sup>25</sup> Հ. Համբարձումյան, Վիպական հերոսների գործառույթների փոխակերպումը, էջ 32:

<sup>26</sup> Այդ մասին տե՛ս *Լ. Ղռեջան, Երկվորյակների առասպելը և դրա տարբեր դրսևորումները հայ վիպական ավանդության համակարգում, Երևան, 2012:*

աշխարքը կրակ տա»<sup>27</sup>: Անվանումը պահպանված է նաև ժողովրդական մի բանաձևային «Ծովինար խաղում է» ասույթում, որ նշանակում է՝ փայլատակում:

Ջրային ծնունդի հետ կապված հետաքրքիր է «Քյուչուք-Մուրադի հեքիաթը», որտեղ աղջիկը թագավորի պատվերով նրա պարտեզում զբոսնելիս սառն աղբյուրի ջրից խմում է և հղիանում<sup>28</sup>: Երբ թագավորը ցանկանում է ամուսնանալ նրա հետ, աղջիկը հրաժարվում է՝ պատճառաբանելով իր մանկահասակ լինելը: Ջավակի թախանձագին հարցին, թե ով է իր հայրը, բացատրում է, որ անհայր է, ծնվել է Անմահական աղբյուրից:

Կուսական ծնունդի մոտիվը սյուժետային տարբեր դրսևորումներով տարածված է հրաշապատում հեքիաթներում: Հեքիաթի անմեղ հերոսուհիները հղիանում են մարջանից («Մերջանի հեքիաթը»<sup>29</sup>), ուլունքից («Ճիքլոն»<sup>30</sup>), նռան հատիկից («Նառդան»<sup>31</sup>): Էպոսի տարբերակներից մեկում Ծովինարը հղիանում է ցորենի հատիկներից:

---

<sup>27</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Է., էջ 71:

<sup>28</sup> Հայ ժողովրդական հեքիաթներ (Այսուհետև՝ ՀԺՀ), հ. III, Երևան, 1962, էջ 284. այս և այլ հեքիաթներ հմմտ. Թ. Հայրապետյան, «Վիպասանքի» հնագույն առասպելների դրսևորումները «Սասնա ծռեր» դյուցազնավեպում և հայկական հրաշապատում հեքիաթներում, էջ 145: Ի դեպ, այս հեքիաթը հետաքրքիր սյուժետային զուգահեռներ ունի նաև «Սասունցի Դավթի» ճյուղի Մելիքի կողմից Դավթի սենյակում փակելու դրվագի առնչությամբ (հմմտ. Սասունցի Դավթի, Երևան, 1961, էջ 137-139):

<sup>29</sup> ՀԺՀ, հ. I, էջ 232-233:

<sup>30</sup> ՀԺՀ, հ. VIII, Երևան, 1977, էջ 482:

<sup>31</sup> ՀԺՀ, հ. VII, Երևան, 1977, էջ 611:

Էպոսի մյուս կարևոր մոտիվը, որի զուգահեռները տեսնում ենք նաև հրաշապատում հեքիաթներում, ամուսնությունն է: Այն վիպական մանրամասներով արտահայտված է հատկապես առաջին և երրորդ ճյուղերում: Ընդհանուր մոտիվը դրսևորվում է հետևյալ կերպ. մի գեղեցկուհի, դյուցազնուհի կամ կախարդուհի, լսելով հերոսի համբավը, սիրո նամակով (գուսանների միջոցով) ամուսնության առաջարկ է անում: Հերոսը հաղթահարում է զանազան դժվարություններ, հասնում է գեղեցկուհուն և ամուսնանում նրա հետ: Աղջկան տիրանալու իրավունքը վերապահվում է միայն փորձություններ հաղթահարած հերոսին, նա «դժվարին առաջադրանքների» կատարումով պետք է ապացուցի, որ մոզական ուժի կրող է», և դրա դրսևորումներից մեկն էլ ծիսական մրցաքննությունն է<sup>32</sup>: Այն մանրամասնորեն արտահայտված է «Մանասար և Բաղդասար» ճյուղի պատումներում:

Հայ ժողովրդական մի շարք հեքիաթներ, ինչպես նաև էպոսի որոշ դրվագներ պահպանել են ամուսնական ցիկլի հնագույն ձևերը, երբ փեսացուին ընտրում էր աղջիկը. իր սիրեցյալին նամակ է գրում Դեղձուն Ծամը, գուսանների միջոցով իր մասին Մասունցի Դավթին տեղեկացնում է Խանդուրը: Հաճախ ընտրյալի փորձությունը լինում է հե՛նց հարսնացուի հետ մենամարտը<sup>33</sup>:

---

<sup>32</sup> Թ. Հայրապետյան, - Ծիսական մրցության մշակույթը հայկական հրաշապատում հեքիաթներում, «ՊԲՀ», 2012, հմր. 1, էջ 160:

<sup>33</sup> Այս մասին հետաքրքիր դիտարկում ունի Հ. Օրբելին. «Մայրիշխանության կարգերը մոռացության տված ժողովրդական գիտակցությունը իշխող կնոջ, իր

Վերուց, զԽանդութ Էտու գետին,

Չոքեր զարկեց Էնու սրտին:

Խանդութ խանում ասաց.

-Ամա՛ն, կտրիճ, ինձ մի սպանի, ես կնիկ եմ...<sup>34</sup>:

Դու դրիր իմ մեջք գետին

Էստուց ետքը՝ ես քե կնիկ, դու ինձի մարդ...<sup>35</sup>:

«Ամիր-Շամիրի հեքիաթում» հերոսուհին զենք ու զրահ հագած մենամարտում է հերոսի հետ՝ գուրգ են նետում, «կոխ» բռնում. «Ախչիկը, որ մեկնվեց, տղեն ծունկը դրուց սրտին՝ թուրը քաշեց: Թուրը որ քաշեց, ախչիկը ծծերը բացեց: Տղեն թուրը վե դրուց»<sup>36</sup>:

Ծիսական մրցության դրվագներ արտահայտված են նաև «Սանասար և Բաղդասար» ճյուղում. Պղնձե քաղաքում Սանասարը հաղթահարում է տարբեր փորձություններ Դեղձուն ծամին արժանանալու համար.

Որդի, Էնի ոսկի խնձոր է,

Էնոր դարգահի սան գլուխ զարկուկ:

Մեկ էլ գուրգ մի կա, կո՛ւ Էն բրջի գլուխ:

Ով Էն ոսկի խնձոր բերի տակ, դնի ի ծոց,

---

համար ամուսին ընտրող կնոջ մասին պատկերացումը պետք է իմաստավորեր՝ նրան թագուհի դարձնելով: Գուցե սրա մեջ է թաքնված այն պատճառը, որ թե՛ Սանասարը, թե՛ Մհերը, թե՛ Դավիթը, թե՛ Փոքր Մհերը ամուսնանում են թագուհիների հետ, որոնց արքունական պալատը իսկույն անհետ չքանում է, հենց որ թագուհիներն ամուսնանում են» (Հայկական հերոսական էպոսը, էջ 47):

<sup>34</sup> Սասունցի Դավիթ, էջ 280:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 282:

<sup>36</sup> ՀԺՀ, հ. I, էջ 278-279:



Դիր մ'ել ձիով բարձրանա, դնի տեղ...  
Ով գուրգ բրջի գլխեն թալի տակ,  
Ակ վիշապի բերնեն հանի<sup>37</sup>...  
Աղջիկ իրեն կը տանի<sup>38</sup>:

Խնձորը հայ թե՛ հեթանոսական, թե՛ քրիստոնեական մշակույթի մեջ յուրահատուկ տեղ է գրավում. այն բազմախորհուրդ է և հաճախ հանդիպում է հրաշապատում հեքիաթներում, հայրեններում, տաղերում, մանրանկարներում, մեկնողական գրականության մեջ<sup>39</sup>: Աշտարակի (կամ այլ բարձր տեղում) դրված խնձորը, որ պիտի վերցնի Սանասարը, առկա է նաև հրաշապատում հեքիաթներում. Թ. Հայրապետյանի գրառած «Թաքավերեն ըխճըկանը վեսկե խնձորը» հեքիաթում մրցության պայմանը հնչում է հետևյալ կերպ. «Թաքավերը դրբբըզեն կըլխեն մին պիիր ա տընգում, վեսկե խընձորը քաղում կըլոխը, թա հու վեր կարե կոմբալ ըրկաթե գուրգավը էն խնձորը քըշըցընե, մին էլ ետ տինի տեղը, ախճիգըս ուրան փեշքեշ, հու վեր կարե վեչ, բադա ըմ տըլական»<sup>40</sup>:

---

<sup>37</sup> Մ. Աբեղյանի վկայությամբ վիշապի բերանի ակը վիշապին գերի աղջկա խորհդանիշն է:

<sup>38</sup> Սասունցի Դավիթ, էջ 70-71:

<sup>39</sup> Ա. Դուրխանյան, Հայ միջնադարյան գրականության հիմնական ուղղություններն ու ժանրերը, Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2012, էջ 117-121: Կա հավատալիք. եթե խնձորը բաժանեն երկու մասի, կենտրոնում դնեն թուղթ սիրած տղայի անունով, կապեն բաժանված մասերը, ապա տղան կհիշի աղջկան և ավելի կցերմանա նրա նկատմամբ (Энциклопедия символов, знаков, эмблем, Москва, 2000, стр. 550):

<sup>40</sup> Թ. Հայրապետյան, Ծիսական մրցության մշակույթը հայկական հրաշապատում հեքիաթներում, էջ 163:

Յոթ կամ քառասուն դների ոսկե խնձորով խաղալու դրվագը նույնպես առկա է Էպոսում և հրաշապատում հեքիաթներում<sup>41</sup>:

Խանդուբը Դավթի նկատմամբ իր համակրանքն ի սկզբանե արտահայտում է խնձոր նետելով.

Խանդութ խանում, որ աչք ընկավ,

ԶԴավիթ տեսավ՝ ուրախացավ:

Ուրախութենէ խնձոր մ'էզար Դավթին:

Դավիթ խնձոր բռնեց վեր ձիուն:

Խնդացավ վեր խնձորին<sup>42</sup>:

«Բերթակ թագավոր» հեքիաթում ամուսնության համար պայքարող երիտասարդը պետք է նետահարի «սինում մեջ» դրած խնձորը<sup>43</sup>:

3. Գործող անձերի, իրերի, երևույթների, թվերի ընդհանրություններ. Հեքիաթներում առկա մի շարք անձեր (ծերունիներ, պառավներ, վիուկներ), իրեր (մատանի, ակ, հրաշալի թուր), երևույթներ (աստղագարդ երկինք) և թվեր (3, 7, 40) առկա են նաև Էպոսում:

Հրաշապատում հեքիաթներում գործում են բարի խորհրդատու ծերունիներ, չար դներ, վիուկներ, վիշապներ: Հերոսները հանդիպում են նրանց հետ, կռվում են նրանց դեմ, հաղթում և վերականգնում արդարությունը:

---

<sup>41</sup> Նույն տեղում:

<sup>42</sup> Սասունցի Դավիթ, էջ 264:

<sup>43</sup> ՀԺՀ, հ. I, էջ 179:

Էպոսում Սանասարը Պղնձե քաղաք գնալիս հանդիպում է մի ծերունու, որը երեք ճանապարհների վերաբերյալ խորհուրդներ է տալիս: Հրաշապատում հեքիաթների հերոսների մեծ մասն այսպես է ստանում դժվարին ճանապարհի առաջին կարևոր խորհրդատվությունը: «Հազարան բլբուլ կամ Ալո Դինոյի նաղլը» հեքիաթում երեք եղբայրները հանդիպում են ճամփաբաժանի ծերունուն և խորհուրդներ ստանում նրանից<sup>44</sup>: Հրաշապատում հեքիաթներում ամենաշատ հանդիպող արարածները վիշապներն են: Էպոսագիտության մեջ վաղուց ապացուցված է վիշապամարտերի ուղղակի և միջնորդավորված ազդեցության հարցը: Վիշապամարտերի արձագանքները հանդիպում են միայն այն պատումներում, որտեղ եղբայրներն ունեն ջրային ծնունդ<sup>45</sup>: Ուղղակի դրսևորումները կապվում են Սանասարի և Բաղդասարի հետ, իսկ անուղղակիները՝ Մասունցի Դավթի: Վերը նշված «Քյուչուք-Մուրադի հեքիաթում» արտահայտված է ամպրոպային հերոսներին բնորոշ վիշապամարտում հաղթելու մոտիվը<sup>46</sup>:

«Սասնա ծռեր» էպոսում բոլոր հերոսներին ուղեկից են Քուռկիկ Ջալալին և Թուր կեծակին: Քուռկիկ Ջալալին հրեղեն է, նա ջրային ծնունդ է, ինչպես Սասնա հերոսները, մարդկային լեզվով խոսում է, ավելին, որոշ պատումներում

---

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>45</sup> Մանրամասն տե՛ս Ս. Հարությունյան, Հայ առասպելաբանություն, էջ 168-178:

<sup>46</sup> Այլ զուգահեռներ տե՛ս Թ. Հայրապետյանի ««Վիպասանքի» հնագույն առասպելների դրսևորումները «Սասնա ծռեր» դյուցազնավեպում և հայկական հրաշապատում հեքիաթներում» հոդվածում:

հերոսները նրան «մարդ» են կոչում: Այդպես հրաշապատում հեքիաթի հերոսներին անընդհատ ընկեր և ուղեկից են ձիերը՝ «Ջան Փոլատ» հեքիաթում Սև ձին, Ալո Դինոյի հանդիպումը ծովային ձիերի հետ և այլն<sup>47</sup>:

Էպոսում առկա են նաև վիուկներ, պառավներ: Նրանք հանդիպում են հիմնականում չորրորդ ճյուղում<sup>48</sup>: Դե պառավների մասին պատմող պատումները պատկանում են Մշո տիպաբանական խմբին: Այդ վիուկները հիմնականում կապված են անտառի, վայրի բնության, մահվան աշխարհի հետ<sup>49</sup>. Էպոսում գործում են շերեփով զինված վրիժառու պառավը, Գոհարի մայր՝ երկարաստինք տգեղ պառավը, Մհերին հորից հանող, օգնական պառավը: Գոհարի մայրը նկարագրվում է հիմնականում մեծ մինչև գետնին հասնող ստինքներով. այս նկարագրությունը գրեթե բառացի հանդիպում է ժողովրդական հեքիաթներում<sup>50</sup>:

Հայ ժողովրդի կենցաղում կարևոր տեղ են գտել նաև տումարական և աստղաբաշխական պատկերացումները: Մաշտոցի անվան Մատենադարանում պահպանվում են այդպիսի ձեռագիր ժողովածուներ՝ «Ախտարք», «Վիճակացույց» անվանումներով: Այդ պատկերացումներն ուրվա-

---

<sup>47</sup> ՀԺՀ, հ. I, էջ 52, 35-37:

<sup>48</sup> Հ. Համբարձումյանի «Սամնա ծոեր» էպոսի և ժողովրդական հեքիաթների դե-պառավներն ու վայրի բնության տիրական Ավդալը» ցարդ անտիպ հոդվածը (համակարգչային շարվածքով) շնորհակալությամբ ստացել ենք հեղինակից, որից և օգտվում ենք սույն նյութը շարադրելից (նշում ենք շարվածքի էջերը):

<sup>49</sup> Նույն տեղում, էջ 5:

<sup>50</sup> Մեջբերումներն ըստ վերոնշյալ հոդվածի. ՀԺՀ, I, էջ 317, II, էջ 361, IV, էջ 209, VII, էջ 815:

գծված են նաև մեր էպոսում և հեքիաթներում. «Հայ ժողովրդական հեքիաթների հերոսները նկատել են... աստղերի խմբավորումները: Աստղերի ճնշող մեծամասնությունը պատվում էր արևելքից արևմուտք, որոշ «աստղեր» կանգ էին առնում, շարժվում հակառակ ուղղությամբ»<sup>51</sup>: Աստղահմայությունը բնորոշ է թե՛ «Վիպասանքին», թե՛ էպոսին. այդ հիշողության վկայությունն էպոսի պատումներում հանդիպող Աստղ Յուլանն է (Պարոն Աստղիկը), որը գուշակում էր աստղերի ընթացքը: Աստղբաշխ էր Վերգոն: Աստղահմայության ակնարկներ առկա են «Զվալ աստղ և նոսան հատ և Օսկեծամ»<sup>52</sup>, «Կուր թագավորի տղեն» հեքիաթներում<sup>53</sup>: Ըստ Ս. Հարությունյանի էպոսում աստղահմայությունը խորհրդանշում է յուրային և օտար էթնիկական միավորներ.

Իմ արտ չորցավ: Վայ, էս ինչ արի:

Հայու ճրագ հանգուցի, Մըսրա ճրագ վառի<sup>54</sup>:

Կամ՝

Ձենով Հովան գիշերն էրագ տեսավ,

Մըսրա աստղ շողին կը տար,

Սասնա աստղը կը խավարեր<sup>55</sup>:

---

<sup>51</sup> Թ. Հայրապետյան, Տոմարական և աստղբաշխական պատկերացումները հայ ժողովրդական հեքիաթներում, «ՊԲՀ», 2007, հմր. 2, էջ 266-267:

<sup>52</sup> ՀԺՀ, հ. IX, Երևան, 1968, էջ 361-375:

<sup>53</sup> ՀԺՀ, հ. VIII, էջ 561-571:

<sup>54</sup> Սասունցի Դավիթ, էջ 125:

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 239:

Հմայության հետ է կապվում նաև էպոսում մատանու միջոցով գուշակությունը. այդպիսի մատանիներով փոխվել էին Սանասարն ու Բաղդասարը.

Աչքն ընկավ Սանասարի մատնիք  
Ինչ աղբեր աղբոր հետ փոխանակեր էր...  
-Մեկ հավոր մարդ մի մեզ նշանց էտուր,  
Ասաց, Երբ էս ամս կը մթնի,  
Դուք էրկու աղբեր՝ որ մեկտեղ չեք ըլնի,  
Իմացեք, որ մեկըն նեղ տեղն է<sup>56</sup>:

«Արևելքի թաքավորի տղի հեքիաթում» վերահաս վտանգի մասին նույն կերպ է իմացվում. «Հյուսիսի թաքավորի տղեն մի դափիլ մտիկ ա տալի ձեռի մատնիքին, տեսնում ա Արևելքի թաքավորի տղի մատանին խավարել ա.- Վա՛յ մադաթ, ախպորս գլուխը էս ի՞նչ օղբաթ ա էկել»<sup>57</sup>:

Էպոսում առկա է նաև հրաշապատում հեքիաթներում հանդիպող 3, 7 և 40 խորհրդանշային թվերը:

Յոթ տարի Սասուն սուգ մընաց,  
Յոթ տարին որ անցավ...  
Սասունցիք ասին Քեռի Թորոսին...<sup>58</sup>:  
Կտրեցին քառսուն վարդապետ մեջ խորանին,  
Կտրեցին քառսուն ավագ սարկավագ մեջ սենեկին,  
Կտրեցին քառսուն լուսարար  
Ու քառսունեն մեկ պակաս սարկավագ...<sup>59</sup>:

---

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 76:

<sup>57</sup> ՀԺՀ, հ. VIII, էջ 175:

<sup>58</sup> Սասունցի Դավիթ, էջ 152:

Էպոսը նման զուգահեռների անսպառ հնարավորություն է ստեղծում, և անշուշտ, նման զուգորդումներ անպայմանորեն կգտնենք նաև այլ ժողովուրդների բանահյուսության մեջ: Մի բան պարզ է, որ նման ուսումնասիրությունները պետք է իրականացվեն ամեն առանձին պատումի (գոնե՝ պատումային առանձին խմբերի) զուգադիր քննությամբ՝ վեր հանելով էպոսի թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա առանձնահատկություններն ու բանահյուսական տարբեր ժանրերի հարաբերակցության աստիճանն ու պատճառները:

---

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 199:



## ՊԱՐՈՒՅՐ ՍԱՀՄԱՆՅԱՆ

*Բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

### **«ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՆ ՈՒ ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

Ամեն ժողովրդի էպոս ներկայացնում է տվյալ ժողովրդի հերոսական մաքառումների որևէ բախտորոշ դրվագ, որի շնորհիվ ազատագրվել է հայրենիքը օտար բռնակալների լծից: Այդպիսին է նաև հայ ժողովրդի հերոսական էպոսը, որի համահավաք բնագիրն ունի «Սասունցի Դավիթ» խորագիրը:

Եթե Աքիլլեսը հույն ժողովրդի լավագույն զգերի ու երազանքների մարմնավորողն է, ապա Սասունցի Դավիթն իր ազատատենչությամբ խորհրդանշում է հայ ժողովրդին: Հեշտ չէ կոնկրետացնել, թե պատմական որ նշանավոր դեմքն է դարձել Սասունցի Դավթի նախատիպը. այն ավելի շուտ մի շարք հայ հերոսների հավաքական կերպար է: Սակայն մասնագետները հենց սկզբից խոր կապ են տեսել «Սասունցի Դավիթ» էպոսի ու Թովմա Արծրունու պատմության միջև: Դրա առաջին օրինակը տվել է հայ բանագիտության մեծ երախտավոր և «Սասունցի Դավիթ» էպոսի առաջին գրառող,



հայ էպոսագիտության հիմնադիր Գարեգին Սրվանձտյանցը, որը 1873 թվականին Առնիստ գյուղի ասացող Կրպոյից գրառեց էպոսի առաջին և հիմնադիր տարբերակը:

Սրվանձտյանցը այդ տարբերակին կցել է մեծարժեք ծանոթագրություններ ու մեկնություններ և առաջինն է, որ էպոսի պատմական հիմքը կապում է Թովմա Արծրունու երկի հետ. «Պատմածին նյութը Արծրունյաց նախարարության և Սասնո գավառի շինությանն ու սկզբնավորությունն է: Աստվածաշունչեն և մեր ազգի պատմութենեն հայտնի է, որ Ասորվոց Սինեքերիմ արքան յուր Ադրամելեք և Սանասար որդիքը կուռքին զոհ պիտի մատուցաներ, ասոնք ալ իրենց հայրը զոհեցին և փախստյան եկան ի Հայս՝ մեր Սկայորդվոյ ժամանակը: Սանասարը բնակեցավ ի Սասուն, և Ադրամելեք՝ Վանա ծովու կողմերը, Կապուտկողա մոտերը: Ասոնց պատմությունը թե՛ Խորենացին, թե՛ Թովմա Արծրունին և թե՛ այլ պատմիչներ ընդարձակ կը գրեն »:<sup>1</sup>

Հետագայում էպոսը գիտականորեն մեկնաբանող բոլոր մասնագետները մատնանշում են «Սասունցի Դավիթ» էպոսի և Թովմա Արծրունու երկի կապը:

Եթե Սրվանձտյանցը այդ կապը ներկայացնում է հաստատելու համար, թե հայերի հերոսական էպոսը իր արմատներով ձգվում է դեպի նախաքրիստոնեական ժամանակները, ապա ավելի ուշ շրջանի մասնագետները էպոսի հիմնական գործողությունները կապում են արաբական նվաճողական արշավանքների և հայ ժողովրդի հերոսական պայքարի

---

<sup>1</sup> Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ 1, Երևան, 1978, էջ 85:

դրվագների հետ, որոնցից մեծագույնը 851 թվականի Խուր լեռան բնակիչների ապստամբությունն էր Հովնան Խութեցու գլխավորությամբ, որը պսակվեց հայերի փայլուն հաղթանակով:

Թովմա Արծրունու «Պատմություն Արծրունյաց տան» երկի երկրորդ դպրության Է(7) գլուխը ամբողջությամբ նվիրված է խութեցիներին՝ «Խութի լեռնցիներից Հովսեփի մահվան մասին: Նրանց պատմությունը»:<sup>2</sup>

«Պատմություն Արծրունյաց տան» երկի աշխարհաբար թարգմանիչ Վրեժ Վարդանյանը նկատել է, թե պատմիչի երկը «պատմաագագրական նյութ է ընձեռում ուսումնասիրողին»:<sup>3</sup> Մակայն նա չի կապում այդ նյութը «Սասունցի Դավիթ» էպոսի առանձին փաստերի հետ:

«Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը՝ ավելի քան տասը հազար տող, կազմել են Մ. Աբեղյանը, Գ. Աբովը, Ա. Ղանալանյանը: Այն խմբագրել ու առաջաբանը գրել է Հովսեփ Օրբելին:<sup>4</sup>

1958 թվականին «Սասունցի Դավիթ» էպոսի ռուսերեն թարգմանության առաջաբանում ակադեմիկոս Օրբելին շատ է կարևորում խութեցիների ապստամբությունը «Սասունցի

---

<sup>2</sup> Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, ներածությունը, թարգմանությունը և ծանոթագրությունները Վրեժ Վարդանյանի, Երևան, 1978, էջ 135-138:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 13:

<sup>4</sup> Հետագայում Հովսեփ Օրբելու առաջաբանը լույս տեսավ առանձին գրքով (Տե՛ս Հովսեփ Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956):

Դավիթ» էպոսի ձևավորման խնդրում. «Быть может, вот этот безымянный горец из Хута в Сасуне или любой другой из его отряда, окутанный в народной памяти ореолом доблести, героической красоты, и послужил ядром для чудесной жемчужины армянского эпоса, образа Давида Сасунца»:<sup>5</sup>

«Краткая литературная энциклопедия» հանրագիտարանի համապատասխան հատորում ընդգծվում է, թե «Սասունցի Դավիթ» էպոսի հիմնական ճյուղի, այսինքն՝ «Սասունցի Դավիթի» համար հիմք է դարձել 851 թվականի հայ գյուղացիների ապստամբությունը արաբ հարկահանների դեմ Արևմտյան Հայաստանի լեռնային շրջաններից մեկում՝ Սասունում:<sup>6</sup> Միաժամանակ նշվում է, թե «Սասունցի Դավիթ» էպոսը մի իսկական բանաստեղծական հանրագիտարան է հայ ժողովրդի կենցաղի, դավանանքի, հոգեբանության, աշխարհայացքի, բարոյականության ու գեղագիտական պատկերացումների. ««Сасунци Давид» - подлинная поэтическая энциклопедия быта, верований, психологии, мировоззрения, этических и эстетических представлений народа»:<sup>7</sup>

«Նոր Բրիտանիկա հանրագիտարանում» ևս շեշտվում է, թե էպոսներում բանավոր կամ գրավոր պատմվում են հերոսական լեգենդներ և պատմություններ, կրոնական հեքիաթներ, կենդանական գրույցներ, բարոյախոսական կամ փիլիսոփայական խրատներ. «Epic – a long narrative poem –

---

<sup>5</sup> Давид Сасунский, Армянский народный эпос, Москва, 1958, с. 9.

<sup>6</sup> Краткая литературная энциклопедия, Москва, 1971, с. 671.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 671:

whether oral or written – recounting heroic legends, histories, religious tales, animal stories, or moral or philosophical ideas»:<sup>8</sup>

Այս ցուցումներն առավել կարևորում են Թովմա Արծրունու երկի՝ խութեցիների կենցաղին, կրոնական պատկերացումներին, բարոյական չափանիշներին ու հերոսականությանը վերաբերող հատվածը:

Մանուկ Աբեղյանն այնքան է կարևորել Թովմայի երկի խութեցիների ապստամբությանը վերաբերող հատվածը, որ այն գրաբարով նույնությամբ զետեղել է «Հայոց հին գրականության պատմության» առաջին հատորում՝<sup>9</sup> նշելով. «Այստեղ դնում ենք նրա լավագույն գլուխներից մեկը՝ Մասունցիների ապստամբության մասին»:<sup>10</sup> Այս հատվածի ամբողջական մեջբերմամբ Մ. Աբեղյանն ավարտում է Թովմա Արծրունու գրչին պատկանող պատմության վերլուծականը և չի զուգահեռում խութեցիներին նվիրված հատված «Մասունցի Դավիթ» էպոսի հետ:

«Հայ ժողովրդի պատմության» երկրորդ հատորում, որը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտը հրատարակել է 1984 թվականին, խութեցիների ապստամբության մասին ասվում է. «Մասունում ու Տարոնում կատարվող այս պատմական դեպքերն իրենց արտացոլումն են գտել հայկական «Մասնա ծոեր» («Մասունցի Դավիթ») հերոսական վեպում, որի կենտրոնական հերոսի՝

---

<sup>8</sup> The New Encyclopedia Britannica, t. III, Printed in U.S.A., 1984, p. 919.

<sup>9</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 497-498:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 497:

Դավթի և գլխավոր կերպարներից Ձենով Օհանի (Հովհան Խութեցի) պատմական նախատիպերը հենց այս ապստամբության ղեկավարներն էին »:<sup>11</sup>

1939 թվականին նշվում է «Սասունցի Դավիթ» էպոսի ստեղծման 1000-ամյակը և այդ առթիվ ի թիվս համահավաք բնագրի, լույս են տեսնում մի շարք ժողովածուներ: Դրանցից մեկում պատմաբան Հ. Հարությունյանը տպագրում է «Սասունցի Դավիթ» էպոսի դարաշրջանը» ծավալուն հոդվածը<sup>12</sup>, որում կարդում ենք. «Մատենագրական մանրակրկիտ հետախուզումից հետո, մեզ համար պարզվում է, որ Յուսուֆին սպանողը եղել է խութեցի Հովնանը, այն մարդը, որ առաջնորդել է ապստամբներին դեպի Մուշ»:<sup>13</sup>

Նախքան խութեցիներին բնութագրող Թովմա Արծրունու երկի հատվածի և «Սասունցի Դավիթ» էպոսի միջև տեսանելի զուգահեռներ անցկացնելը, դիտարկենք, թե որքան համահունչ է «Սասունցի Դավիթ» էպոսի ոգուն ու դեպքերի պատումին Թովմայի երկի նախորդ՝ Ջ(6) գլխի ավարտի հատվածը:

Էպոսից հայտնի է դառնում, որ Մսրա Մելիքի վրա կռիվ գնալու ժամանակ արաբ ծերունու խորհրդով Դավիթը անմեղ զորքի փոխարեն որոշում է մենամարտել հենց Մսրա Մելիքի

---

<sup>11</sup> «Հայ ժողովրդի պատմություն», հ. II, Երևան, 1984, էջ 354:

<sup>12</sup> «Սասունցի Դավիթ», Հոբեյանական ժողովածու նվիրված էպոսի 1000-ամյակին, Երևան, 1939, էջ 231-266:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 263:

հետ: Վերջինս նենգորեն բանակցում է Դավթի հետ և խար-  
դախ ձևով նրան զգում փոսը.

Խաբեցին Դավթին ձիուց բերին տակ:  
Ձին ըռըկավ, փախա՛վ, գընա՛ց,  
Գընաց՝ էլավ սարի գլուխ:  
Տարան Դավթին նստեցուցին վեր էն հորին:  
Դըրըմբ ... ընկավ հոր վե, գընաց:  
Մեջ էդ հորուն էրկաթե թոռ, օղեր կային:  
Դավիթ ընկավ օղերու մեջ,  
Չըկրցավ դուրս էլներ.  
Էրկաթե թոռ էկավ իրուր :  
Մելիք բերեց ջաղցի քարեր,  
Քաշեց հորի բերնի վերան թողեց, ասաց.  
-Է՞ն էր, որ հետ ինձի կռիվ տ'աներ,  
Հայ-հոյ ... Դավիթ Սասնու էկեր է՝

Հետ Մելքին կռի՛վ կանի.

Թլո՛ր Դավիթ Մըսրա Մելիքին կռի՛վ անի ...  
հայ – հա՛յ ...

Դե թող կենա էնտեղ, չուր օսկորներ փտեն ...<sup>14</sup>

---

<sup>14</sup> «Սասունցի Դավիթ», հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 238: Այսուհետև այս գրքից մեջբերումների էջերը կնշվեն վերևում – Պ.Ս.:

Էպոսի այս հատվածը լիովին համահունչ է Թովմայի հետևյալ պատմածին: Արաբ Յասուփ (Հովսեփ) ամիրան խաբեությանը իր մոտ է հրավիրում հայոց իշխան Բագրատին՝ նախապես նամակով հավաստիացնելով, թե հրավերը բարի նպատակներ է հետապնդում, որովհետև ինքը որոշել է Հայաստան աշխարհը վստահել Բագրատին. «Իսկ իշխան Բագրատը, քանզի չուներ նենգադրուժ կասկածներ թագավորի ու նրա զորքի հանդեպ, անխիղճ համարձակությամբ ու տիրասեր մտածումով ելավ գնաց ժամանած կոչնակների հետ, որպեսզի կատարի զինվորական ծառայությունը ըստ աստվածային պատվիրանի ու թագավորական հրամանի: Ոչինչ չգիտեր նրա խաբեության մասին, ուստի սխալվեց: Հետը վերցրեց նաև Աստվածաշունչ գրքի սուրբ կտակարանները, քահանայական դասի պաշտոնյաների բազմության հետ: [Հովսեփը] բռնեց նրան և իր ամբողջ ազգատոհմը՝ Բագրատունյաց տոհմից, կապեց երկաթյա կապանքներով և ուղարկեց Սամառա»:<sup>15</sup> Այնուհետև ողջ Տարոն գավառը ենթարկում է թալանի:

Նույն հատվածում խոսվում է նաև արաբական խալիֆաթի կողմից Հայաստանից գերիներ տանելու և իրենց համար որպես բանող աշխատուժ գործածելու մասին:<sup>16</sup> Այս արատավոր երևույթը նույնպես իր արտացոլումն է գտել հայ-

---

<sup>15</sup> Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 135: Սամառան IX դարի 50-ական թվականներին Արաբական խալիֆաթի մայրաքաղաքն էր:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 135:

կական էպոսում: Մարա Մելիքը մեջլիսում իր պալատականների հետ խորհրդակցում է, թե ինչպես զինվորական ուժով մտնեն Հայաստան, թալանեն Սասունը և դրա հետ մեկտեղ բերեն գերիներ, որպեսզի.

Տ'երթամ Սասնա քաղաք թալնեմ, բերեմ քեզի,  
Քառսուն էրկեն կնիկ բերեմ՝ ուղտեր բառնան,  
Քառսուն կոլոտ կնիկ բերեմ՝ էրկանք աղան,  
Քառսուն ազապ աղջիկ բերեմ քեզ արմաղա՛ն:  
Քառսուն արջառ, քառսուն էրինջ,  
Քառսուն ուղտու բեռով արծաթ,  
Քառսուն ուղտու բեռով ոսկի՛ բերեմ – քե խարջ,  
Սասուն անեմ առ ու թալան:

ԶԴավի՛թ էլ սպանեմ, գլուխ բերեմ քեզի (էջ 203):

Պատմության է(7) գլխում Թովմա Արծրունին պատմում է խութեցիների վարք ու բարքի, սովորությունների, հագուստի, սննդի, հարազատական կապերի, կրոնական հավատալիքների մասին, որոնք շատ նույնական են մեր ազգային էպոսի պատումների հետ:

Սասունցիներն ապրում էին միմյանցից հեռու ընկած գյուղերում, ծանր աշխատանքով ձեռք էին բերում իրենց ապրուստը և բավարարում իրենց պետքերը: Սասունցիների սննդի վերաբերյալ Թ. Արծրունին ասում է. «Կերակրի պետքերի համար գործ են ածում ինչ-որ սերմեր, առավելապես



կորեկ կոչվող բույսը, որ սովի ժամանակ ումանք անվանում են հաց»:<sup>17</sup>

Կորեկի բացատրությունը տրված է Ստ. Մալխասյանցի բառարանում. «Կորեկ – Խոտազգիների կարգին պատկանող բույս բարձր ցողունով, լայն տերևներով, մանրահասկ, շատ մանր՝ կլոր ու դեղին հատիկներով, որոնցով մանր թռչուններ են կերակրում, կարիքի դեպքում ուտում են և մարդիկ: Արտը կարկուտ զարկեց, տեղը կորեկ ցանեցին»:<sup>18</sup>

Կորեկը խիստ զիջում է ցորենի հացին իր մարսողական հատկանիշներով, դրա համար էլ Թովման նշում է, թե սով տարիներին են դրանից հաց թխում:

Էպոսում քեռի Թորոսը Դավթին նկարագրում է, թե ինչպես է արդար աշխատանքով սասունցին կորեկ հացն աշխատում.

- Տո՛, ծու՛ռ Դավիթ, արի քեզի տանեմ Դաշտու Պաղրիալ,

Հոնի քեզ տամ նախորդ, հոտաղ,  
Դու առնես քո հախ՝ կոտ մի **Կորեկ**,  
Առնես, բերես մեր տու՛ն,  
Ես տանեմ ջաղաց, աղա՛մ,  
Բերեմ քո քեռակին շաղա՛,  
Թխա, թոնդրեն հանա, տա՛ քեզի,

---

<sup>17</sup> Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 137:

<sup>18</sup> Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. II, Զ-Կ, Երևան, 2010, էջ 476:

Վերցուս, հաց մի ինձի տաս,  
Ասես՝ քեռի, էդ իմ աշխատանքն է.  
Առ, էդա հացըն կեր» (էջ 173):

Մի՞թե կարելի է գտնել արդար աշխատանքի առավել ազնիվ գովք, որը տեսնում ենք մեր ազգային էպոսի այս պարզ, սակայն խորիմաստ տողերում:

Խուլթեցիները, ըստ Թ. Արծրունու, շատ բարձրախոս էին, նրանց նման բարձրախոսներ այլուր դժվար էր գտնել, երբ խոսում էին, թվում էր, թե նրանց ձայնի արձագանքը լսվում էր ժայռերի միջից: «Իրենց մերկությունը ծածկելու համար հագնում էին բրոյա շորեր: Լեռներում բնակվող գազաններից պաշտպանվելու համար ունեն աշտե զենքը, որ կրում են մշտապես»:<sup>19</sup>

Բարձր ձայն ունի ոչ միայն Դավթի հորեղբայր Օհանը, որի համար էլ նրան կոչում են Ձենով Օհան, այլ հենց ինքը՝ Դավիթը: Այս իրողությանը հանդիպում ենք էպոսի տարբեր դրվագներում:

Դավթի բարձր ձայնը նրա զենքերից մեկն է: Երբ դները հայ նախորդներին կողոպտում են, Դավիթը դներին փակում է քարանձավում և այնպես է գոռում, որ դների մեծը վախից պատրաստակամ Դավթին առաջարկում է դառնալ նրա ծառան.

Դավիթ էդտեղ մեկ որ բռռաց,  
Սարսափ թափավ հարամի դներու վերան,

---

<sup>19</sup> Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 137:

Դներու մեծ էնոր ձեն լսեց, ասաց.

-Էլէ՛ք, ծառայություն՝ն արեք, որ չըսպանի մեզի (էջ

178):

Ձայնի բարձրությունը մի քանի առիթներով բացառիկ կարևորություն է ստանում էպոսում: Երբ Դավիթը գնում է Մսրա Մելիքի հետ արդարորեն պատերազմելու, Ձենով Օհանը երազ է տեսնում. Մսրա աստղը շողշողում էր, իսկ Սասնա աստղը խավարել էր, երազը նույն բովանդակությամբ կրկնվում է, և Դավթի հորեղբայրը հասկանում է , որ իր զարմիկը վտանգի մեջ է: Ձենով Օհանը իր վրա փաթաթում է յոթ գոմշի կաշի, նաև յոթ շղթա, որ գոռալուց չպատռվի, հագնում է զենք-զրահը և լեռան գագաթից կանչում է Մսրա Մելիքի թակարդ-փոսում բանտարկված Դավթին.

Կանչեց ...

Հովանի ձեն հասավ, ընկավ Դավթի ականջ.

Դավիթ ասաց. – Հայ - հա՛յ,

Հրողբե՛րս է էկե էստեղ.

Ինձ կը կանչի.

Յա, Մարութա բարձրիկ Աստվածածին,

Խաչ Պատերազմին, վեր իմ աջ թևին:

Ասաց, զինք թափ էտու:

Էրկաթե օղ ու շղթաներ թռան էրկինք,

Ջաղցի քարեր բլան, թռան,

Էնոնց ամեն կտոր քառսուն մարդ ըսպանեց (էջ 241):

Թովմա Արծրունին վկայում է, թե խութեցիները շատ քաջարի են և մահը առ ոչինչ են համարում: Այսօրինակ փաստեր տալիս են էպոսի գրեթե բոլոր դյուցազունները, որոնք կռվում են վիշապների, դևերի, առյուծի դեմ: Մահը ընդունում են փիլիսոփայորեն խաղաղ: Մեծ Մհերը, օրինակ, դիմում է գիտակցված մահվան, միայն թե զավակ ունենա, միայն թե իր հայրենիքը անտեր չթողնի: Դավիթը մշտական կռիվների մեջ է հանուն իր հայրենի երկրի ու ժողովրդի և շատ անգամ համոզված էլ չի, թե կենդանի է մնալու: Շարունակական պատերազմների մեջ է նաև Դավթի որդին՝ Փոքր Մհերը:

Թովմա Արծրունին հավատացնում է, թե խութեցիները շատ հայրենասեր են: Երբ թշնամին հարձակվում է Սասունի վրա, իջնում են լեռներից ու «միաբան գալիս են իրենց իշխաններին օգնության, քանզի տիրասեր են»:<sup>20</sup>

Պատմիչը խութեցիներին պատկերում է որպես հնարագետ մարդիկ. նրանք ձմռանը, երբ ձյունը ծածկում է գետինը և քայլելու համար վտանգավոր է դառնում, իրենց ոտքերին օղակներով ու չվանով կապում են փայտեր ու գետնի վրա հանգիստ քայլում են: «Սասունցի Դավիթ» էպոսի հերոսներն էլ բազմիցս ցուցաբերում են իրենց հնարամտությունը: Դավիթն, օրինակ, մի հսկա քարով փակում է դևերի քարայրի դուռը և նրանց այդ ձևով բանտարկում ու սարսափեցնում՝ նախքան հաշվեհարդար տեսնելը: Կամ զգալով, թե Մարա Մելիքը իրեն Սասուն ճանապարհելուց առաջ ուղեկցող ծա-

---

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 137:

ռաներին հանձնարարել է ճանապարհին սպանել Դավթին, շրջահայեցությամբ ու հնարամտությամբ կարողանում է ծառաներին խոստովանեցնել տալ: Բաթմանա կամրջի վրայից Մսրա Մելիքի փահլևաններն ուզում են Դավթին նետել ջուրը, սակայն Դավիթը նրանց երկուսին իրար է զարկում ու կախում կամրջի երկու կողմերից: Փահլևանները խոստովանում են.

Մըսրա Մելիք ասաց մեզի՝

«Տարեք Բաթմանա կամրջի վերան Դավիթ զենեցեք.

Կուժ մի էնոր արնեն առեք,

Էնոր ջանդաք թալեցեք ջուր,

Արուն բերեք, որ ես խըմեմ, իմ սիրտ հովնա» (Էջ 157):

Այս խոստովանությունից հետո Դավիթն իրեն հատուկ մեծահոգությամբ փահլևաններին կենդանի է թողնում, սպանում է մի նապաստակ, կուժը լցնում է նրա արյունով, որ տանեն Մսրա Մելիքին, սակայն փահլևաններից մեկը հրաժարվում է վերադառնալ Մըսր և խնդրում է Դավթին իրեն ծառայության վերցնել:

Թովմա Արծրունին ասում է, թե խութեցիներն անգիր գիտեն հայոց վարդապետների թարգմանած հին սաղմոսները: «Սասունցի Դավիթ» էպոսի ամենատարբեր հատվածներում առկա է սասունցիների քրիստոնեական բարեպաշտությունը: Հին սաղմոսներ ասելով պատմիչն ի նկատի ունի Հին կտակարանում զետեղված Դավիթ մարգարեի սաղմոսները, որոնք համահունչ են «Սասունցի Դավիթ» էպոսի ոգուն: Ահա մի հատված Դավիթ մարգարեի սաղմոսներից.

Ահա Աստված ինձ օգնական է:  
Տերը իմ հոգուս պաշտպանների հետ է:  
Չարությունը թշնամիներիս վրա պիտի թափի:  
Քո ճշմարտությամբ ոչնչացրու նրանց:  
Ես իմ կամքով քեզ գոհ պիտի մատուցեմ,  
Ո՛վ Տեր, քո անունդ պիտի գովեմ, որովհետև բարի է:  
Որովհետև ամեն նեղությունից ինձ փրկեց  
Ու իմ աչքը թշնամիների կորուստը տեսավ:<sup>21</sup>

Թովմա Արծրունու խութեցիներին տրված բնորոշումներից մեկն այն է, որ նրանք. «Հյուրասեր են և պատիվ տվող»:<sup>22</sup>

«Սասունցի Դավիթ» էպոսում բազմաթիվ են սասունցիների պատիվ տալու, հյուրընկալ լինելու, իրենց ունեցածը ուրիշների հետ անշահախնդիր կիսելու դրվագները: Դավիթը երախտագիտությամբ ու պատվախնդրությամբ Մսրա Մելիքի մորն ու քրոջը բաշխում է առաջին երկու զարկերը, որովհետև Մսրա Մելիքի մայրը Դավթին կերակրել է իր կրծքի կաթով, իսկ քույրն էլ նրան գրկել ու փայփայել է.

Դավիթ իր թուր իջեցուց, տարավ, բերեց,  
Բարձրացուց էդ թուր, համբուրեց,  
Դրեց ճակատին, ասաց. - Մարե՛,  
-Էս մեկ զարկ քո՛ խաթեր (էջ 245):

Խութեցիներին վերաբերող հատվածի կիզակետը արար նվաճող Յուսուֆի սպանումն է: Վերջինս իրեն պահում է

---

<sup>21</sup> «Սաղմոսաց», 54, 4-8:

<sup>22</sup> Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 138:

ճիշտ և ճիշտ Մսրա Մելիքի նման: Նա էլ նենգ է, արյունախում, կործանում է Հայաստանը, սակայն միաժամանակ շատ վախկոտ է. վճռական պահին Մսրա Մելիքի նման ոչ թե ճակատում է, այլ փախչելով թաքնվում է եկեղեցու գմբեթում. «Բայց ինքը՝ կարծեցյալ մարգպանը, փախավ ընկավ մեծ եկեղեցին, որ հանուն փրկչի մեծ ծախսով՝ 300 հազար [դահեկանով] կառուցել էր Բագարատ իշխանը: Եվ այն ժամանակ նա սարսափից դողահար թաքնվեց գմբեթում: Մեկնազենները շրջապատեցին եկեղեցին, նրանցից ոմանք բարձրացան մինչև գմբեթի փորվածքը և ինչ-որ մեկը աշտեով հարվածեց [Հովսեփի] թիկունքի մեջտեղը և դուրս հանեց թևատակից՝ թոքերի միջով: Նա փչեց շունչը և թաղվեց էշի պես»:<sup>23</sup> Որոշակի է Մելիքի մահվան ու Յուսուֆի խութեցիններից սպանվելու տեսարանների նմանությունը: Երկու դեպքում էլ բռնակալները պատկերված են իրենց վախկոտությամբ, ու նրանց նկատմամբ առկա է ժողովրդի արհամարհանքը: Եթե Յուսուֆը թաղվում է էշի պես, ապա Դավիթը Մելիքի ականջը զարկում է նիզակի ծայրին, բերում է Սասնա քաղաք՝ վախկոտ Վերգոյին նվեր.

Մըսրա Մելիքի ականջ Դավիթ զարկեց նիզակի ձեռ,  
Դրավ վեր սելին, քաշեցին, բերին,  
Քաշեցին բերին՝ Սասնա քաղաք հասցնեն,  
Վերգոյին նվեր (էջ 248):

1977 թվականին լույս են տեսել «Սասնա ծռեր» էպոսի տասը ընտիր պատումները՝ անվանի բանագետ Սարգիս

---

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 136-137:

Հարությունյանի աշխատությամբ: «Հայ ժողովրդական վեպը» կուլտուր – պատմական ակնարկում բանագետը գրում է. «Մեծ Մհերի և մանավանդ Դավթի ճյուղի պատմական միջուկն է կազմում արաբների հարկային ծանր քաղաքականությունը Հայաստանում և դրա դեմ ուղղված սասունցիների 749 և 851թթ. ապստամբությունները, որոնցից առաջինը գլխավորում է Դադայի որդի Հավհանը, իսկ երկրորդը՝ Հովհան Բագրատունին և նրա հորեղբորորդիներ Դավիթն ու Աշոտը: Պատմական այս անձնավորությունները մտել են վեպ, դարձել վիպական հերոսներ՝ հանձինս Ձենով Հովհանի և Դավթի»:<sup>24</sup>

Ֆրանսիացի նշանավոր հայագետ Մարի Ֆելիսիտե Բրոսսեն 1862 թվականին ֆրանսերեն է թարգմանել Թովմա Արծրունու և Անանունի պատմությունը՝ բարձր գնահատելով նրա պատմական արժեքը: Նա եզրակացնում է. «Եվ զարմանալի չէ, որ հայ ժողովրդի պատմության մեջ այս դիրքն ունեցող ընտանիքը պիտի ունենար իր հատուկ պատմությունը»:<sup>25</sup>

Այդ հատուկ պատմությունն էլ մեծ չափերով օգնում է որոշելու «Սասունցի Դավիթ» էպոսի պատմականությունը:

---

<sup>24</sup> «Սասնա ծռեր», ժողովրդական վեպ, աշխատությամբ Սարգիս Հարությունյանի, Երևան, 1977, էջ 636:

<sup>25</sup> Ա. Դոլուխանյան, Մարի Ֆելիսիտե Բրոսսեն հայագետ, Երևան, 2002, էջ 14:





## ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

*Մանկավարժական գիտությունների  
թեկնածու, դոցենտ*

### «ՄԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԿԱՆԱՆՑ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ ԸՍՏ ՀՕՐԲԵԼՈՒ

Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին «Մասունցի Դավիթ» էպոսի կերպարների բնութագրման մեջ առանձնակի տեղ է հատկացնում կանանց: Սա շատ տրամաբանական է, որովհետև կանայք շատ կարևոր դեր ունեն հայ ազգային էպոսում և հաճախ նրանում կատարվող գործողությունների շարժիչ ուժն են:

«Մասունցի Դավիթ» էպոսը պատմական ստեղծագործություն է, իսկ պատմությունն առանց կնոջ չի լինում: Այս ճշմարտությունը հետաքրքիր ձևով քննության առարկա է դարձրել պատմավիպասան Բաֆֆին «Սամվել» վեպի առաջաբանում. «Մեր պատմության մեջ մոռացված է և մեր ժողովրդի մի նշանավոր տարրը՝ կինը: Մենք ծանոթ ենք մի քանի կանանց անունների հետ միայն, իսկ նրանց կյանքը յուր բոլոր մանրամասներով մեզ անհայտ է: Ի՞նչ էր հայ կինը, որպես ամուսին, ի՞նչ էր նա, որպես մայր, ի՞նչ դեր էր խաղում, որպես ընտանիքի և հասարակության անդամ, - այդ

մենք չգիտենք: ...Իսկ առանց կնոջ վեպը կարող չէ լինել. կինն է նրա ոգին և կենդանությունը»:<sup>1</sup>

«Մասունցի Դավիթ» էպոսում կինը ոչ միայն կա, այլև ժողովրդական ասացողները նրան պատկերել են և՛ որպես մայր, և՛ իր հասարակական դերով, և՛ ընտանիքի անդամների հետ ունեցած փոխհարաբերություններով:

Հետևելով ժողովրդի մտածողությանը՝ ակադեմիկոս Հ.Օրբելին Մասնա դյուցազունների բոլոր կանանց ներկայացնում է որպես չնաշխարհիկ էակներ: Նրանք, հիրավի, արժանավոր հարսներ են իրենց դյուցազուն ամուսինների մոր ու նախամոր՝ Ծովինարի համար:

Էպոսագետը Ծովինարի մասին խոսելիս նրա անունը ստուգաբանում է՝ «ծովածին, ծովազն»<sup>2</sup> ձևով: Ծովինարը հայրենասեր է և միանում է այն մարդկանց կարծիքին, թե ավելի լավ է ինքն ամուսնանա այլադավան խալիֆի հետ, քան մի ամբողջ երկիր ավերվի և հազարավոր մարդիկ կոտորվեն: Ահա թե ինչ խորիմաստ խոսքերով է դիմում հորը՝ Գազիկ թագավորին.

- Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,  
Զամեն տի սպանի իմ պատճառով,  
Աղեկն էն է, ե՛ս էրթամ,  
Ուրիշ մարդու թող բան չըլնի:  
Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն.

---

<sup>1</sup> Բաֆֆի, Երկերի ժողովածու տասը հատորով, հ.7, Երևան, 1956, էջ 6:

<sup>2</sup> «Մասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Նախաբանը՝ ակադեմիկոս Հ.Օրբելու, Երևան, 1961, էջ VI:

Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսըվիմ,  
Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,  
Էն հազար հազար հոգիք կորուսանին:  
Դարձավ ասաց. - Հայրի՛կ, ինձ տուր էնոր:<sup>3</sup>

Սասնա դյուցազունների՝ Սանասարի ու Բաղդասարի մայրը ձևականորեն է ամուսնանում խալիֆի հետ. նա պայման է դնում, որ մի ամբողջ տարի խալիֆը չպետք է իրեն մոտենա: Խալիֆը համաձայնվում է, նույնիսկ Ծովինարի համար առանձին դոյակ է կառուցել տալիս:

Ծովինարի որդիները այլադավան հորից չեն, այլ իր հայրենիքի ժայռից բխած ջրից են առաջացել: Փաստորեն հայ արքայադուստրը, որն իր հետ Բաղդադ էր տարել քահանայի, ոչ մարմնով և ոչ էլ հոգով ու հավատով չի հաղորդակցվում խալիֆին. նա պահում է իր անարատությունն ու անկախությունը:

Ծովինարի՝ օտարին չենթարկվելու այդ գիծն էլ ժառանգում են Սասնա բոլոր դյուցազունները՝ Սանասարից մինչև Փոքր Մհեր:

Առաջին ճյուղի կին հերոսուհին Դեղձունն է՝ Սանասարի կինը: Օրբելու կարծիքով Դեղձունի կերպարի մեջ կա մոնումենտալություն. ամուսնու՝ Սանասարի մահից հետո երկար տարիներ նա իրեն բանտարկում է՝ սգալով սիրելի ամուսնու մահը: Եվ միայն մութ բանտից դուրս գալիս այն ժամանակ, երբ շատ երիտասարդ Դավիթը բարձրացնում է

---

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 6: Այսուհետև «Սասունցի Դավիթ» էպոսից կատարված մեջբերումների էջերը կնշվեն վերևում – Ռ.Դ.:

հոր ծանր սուրբ, հագնում նրա ասպագենը, հեծնում Քուռկիկ Ջալալուն: Դեղձունը ոչ միայն դուրս է գալիս իր մենությունից ու ճգնարանից, այլև սկսում է հորդոր կարդալ Քուռկիկ Ջալալուն, որ վերջինս հայրություն ու մայրություն անի որբուկ Դավթին, նրան տանի Կաթնաղբյուր, որպեսզի Դավիթը ջուր խմի ու հզորանա, տանի փորձաքար սյան մոտ, որպեսզի Դավիթն իր ուժը փորձի և ընդհանրապես «ամանաթ» է տալիս իր թոռանը:

Այս հատվածում տեսնում ենք հայ կնոջ բոլոր գովելի հատկանիշները. «...և՛ Տան մորը՝ Սասնա տիրուհուն, և՛ կովի գնացող թոռանը բարի ճանապարհի մաղթող զառամյալ տատիկին»:<sup>4</sup>

Էպոսի երկրորդ ճյուղի դյուցազունը՝ Մեծ Մհերը, ամուսնանում է Արմաղանի հետ: Օրբելին նկատում է. «...սպանում է Դևին և ամուսնանում նրա ամբոցում գերության մեջ տառապող չնաշխարհիկ արքայադստեր՝ Արմաղանի հետ»:<sup>5</sup> Արմաղանին թերևս բաժին է ընկնում ամենաձանր ճակատագիրը: Մարա Մելիքի մահից հետո Մեծ Մհերը, ըստ նախապես կնքված պայմանագրի, պետք է նրա ընտանիքի հոգսը տաներ և մեկնում է Մար՝ անտեսելով կնոջ՝ Արմաղանի տագնապներն ու զգուշացումները:

Մարա Մելիքի կինը՝ Իսմիլը, Մհերին արբեցնում է շատ հին գինով ու նրանից որդի է ունենում, որպեսզի շողշողա

---

<sup>4</sup> Նույն տեղում, էջ X:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ XI:

Մտրա աստղը: Մհերը հասկանում է, թե որքան խաբված է ինքը և շտապ վերադառնում է Սասուն:

Արմաղանը, որ երդվել էր չընդունել իր սիրելի ամուսնուն, տեղի է տալիս, երբ հասկանում է, թե Սասունին նոր տեր է պետք և իր կյանքի գնով ծնում է Դավթին:

Օրբելին Իսմիլ խանումին բնութագրում է որպես բարդ կերպար: Նա հանուն իր երկրի շահի գայթակղում է Մեծ Մհերին, սակայն չի զլանում պահել պահպանել մանուկ Դավթին, չի թողնում, որ Մելիքը վնասի Դավթին և նրան, արդեն պատանի դարձած, ճանապարհում է Սասուն: Նույն Իսմիլ խանումը ծնկաչոք աղաչում է Դավթին իրեն բաշխել առաջին զարկը՝ չէ որ Դավիթը մեծացել է իր կրծքի կաթով:

Էպոսի մեկնաբանի կարծիքով և՛ Իսմիլ խանումի և՛ Դեղձունի ու Խանդութի կերպարներում առկա են մայրատիրության հետքերը, որովհետև նրանք հենց իրենք են ընտրում իրենց տղամարդկանց: Նման դիտարկումն էպոսի արմատները հասցնում է վաղնջական ժամանակներին: Մայրիշխանության ժամանակ կինը գլխավոր դեր ուներ հասարակական արտադրության մեջ, որը ենթադրում էր ժառանգների դաստիարակումը, հասարակական տնտեսության վարումը, օջախի պահպանումը, համայնքի ներսում անդամների փոխհարաբերությունների կարգավորումը, կրոնական ծեսերի կատարումը և այլն:<sup>6</sup>

---

<sup>6</sup> Մայրիշխանության մասին տե՛ս «Փիլիսոփայական բառարան», Մ.Մ.Ռոզենտալի խմբագրությամբ, Երևան, 1975, էջ 270:

Օրբելին նկատել է, որ էպոսում ամենից շատ քննադատված են Սարիեն՝ Ձենով Օհանի կինը և Չմշկիկ սուրբանը: Սարիեն անսանձ անառակ է, կեղծավոր է ու կամակոր: Գիտնականը Սարիեին համեմատում է հունական դիցաբանության Ֆեդրայի հետ:

Փեդրայի կամ Ֆեդրայի մասին դիցաբանական բառարանում գրված է. «Մինոսի և Պասիփայայի դուստրը, Արիագանայի քույրը, Թերեսի երկրորդ կինը, Դեմոփոնի և Ակամասի մայրը, որն այրվել է իր խորթ որդու՝ Հիպպոլիտոսի հանդեպ տաճած սիրուց: Մերժվելով պատանուց Ֆեդրան անձնասպան է լինում անպատասխան սիրո պատճառով»:<sup>7</sup> Սարիեն տարբերվում է Ֆեդրայից նրանով, որ մի քանի անգամ պատանի Դավթին գայթակղելուց և մերժվելուց հետո շարունակում է իր անագնիվ արարքը:

«Սասունցի Դավիթ» էպոսի ֆրանսերեն թարգմանիչը՝ Ֆրեդերիկ Ֆեյդին, էպոսի կանանց տվել է ամփոփ, սակայն սպառիչ հետևյալ բնութագիրը. «Կանայք շատ տարբեր են. կախարդներ, պատերազմողներ և այլն, բայց նրանք, ովքեր ամուսնության հետևանքով դառնում են հայեր, կրում են իր արժեքը իմացող հայ կանանց հատուկ բոլոր իդեալական հատկությունները. Քառասուն Ճյուղ-Ծամբ, ստանձնելով ինձամակալություն, թագավորեցնում է իր որդի Մհերին: Բայց վերջինիս մահից հետո փակվում է սաստիկ սգի մեջ մինչև այն օրը, երբ տեսնում է իր թոռ Դավթին զենքը ձեռքին

---

<sup>7</sup> Տե՛ս «Դիցաբանական բառարան», թարգմանիչ Ս.Մ.Կրկյաշարյան, Երևան, 1985, էջ 245:

իր ժողովրդին պաշտպանելիս, Արմաղանը նախընտրում է պետական շահի համար մի երդմնագանցություն, որ արժենում է երկրային կյանքը և վտանգի է ենթարկում նրա հավերժական կյանքը:

Խանդուբը հրաժարվում է ապրել Դավթից հետո, Փոքր Մհերի կինը, որ մեռնում է իր երկրում Մհերին սպասելով, որպես կտակ թողնում է մի նամակ՝ խնդրելով իրեն թաղել հայկական հողում»:<sup>8</sup> Այսպիսին է ըստ ֆրանսիացի հայագետի հայ կնոջը հատուկ նկարագիրը:

Ուշագրավ է, որ Խ.Աբովյանը «Վերք Հայաստանի» վեպում, որ գրված է ժողովրդական խոր մտածողությամբ, նույնկերպ է ներկայացնում իր ժամանակի Քանաքեռի հայուհիներին: Հայ տղամարդը գնահատում էր իրեն անսահման նվիրված հայ կնոջը և նրան պահում էր ծաղկի նման, ու նրանք նմանվում էին գարնան վարդի: Շքեղ զգեստներ, սամուր քուրք, թանկարժեք մաշիկներ, ճակատին ոսկիներ շարած, մեջքին նույնպես ոսկե քամար, ահա այդ կանանց պատկերը: Թվում էր, թե այդ կանայք ու աղջիկները «բեկզադա կամ խանգադա»<sup>9</sup> էին: Քանաքեռի կանայք ու աղջիկները պատրաստակամ կատարում էին տնային գործերը և խորին հարգանքով էին վերաբերվում մեծերին, հյուրնկալ էին ու հնազանդ:

Էպոսի կանանց մեջ առանձնանում է Խանդուբն այնպես, ինչպես բոլոր դյուցազունների մեջ կատարելատիպ

---

<sup>8</sup> Ա.Դոլուխանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 184:

<sup>9</sup> Խաչատուր Աբովյան, Ընտիր երկեր, հ. I, Երևան, 1939, էջ 31:

Դավիթը: Խանդութի և Դավթի սիրո պատմությունը առավել իրական ու կենդանի դրվագներ ունի: Խանդութը կատարյալ գեղեցկուհի է. դա երևում է գուսանների գովքից: Խանդութը հասակով նրբագեղ ու ճկուն է ինչպես եղեգը, լայնսիրտ է, քաղցրախոս է, ատամները մարգարտաշար են, աչքերը գինու կթխա.

*Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.*

*Էնոր բոյ գյուլու էղեգ նման է:*

*Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.*

*Էնոր սրտիկ Քուռկիկ Ջալալու մեղանն է.*

*Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.*

*Էնոր բերան մեղրով բացած է:*

*Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.*

*Էնոր ատամներ մարգրրիտ շարած է:*

*Տ'ասեմ, տի գովեմ Խանդութ խանում Դավթին.*

*Էնոր աչքեր գինու կթխա է: (Էջ 258)*

Խանդութը, որ հեռվից սիրահարվել էր Դավթին, հենց հանդիպման առաջին պահից հասկանում է, որ նա իր ընտրյալն է ու փրկում է Դավթին 40 փահլևանների վրեժ-խնդրությունից ու նենգ նպատակներից՝ երդիկից կաղիններ նետելով արծաթյա սկուտեղի մեջ ու այդ ձայնով արթուն պահելով հարբած Դավթին: Օրբելու կարծիքով Խանդութի մենամարտը Դավթի հետ առավել բացահայտում է այդ կնոջ դուրս-ցազնական ներաշխարհը:<sup>10</sup>

---

<sup>10</sup> «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ XX:



Դավթի և Խանդութի սիրո պատմությունը էպոսում վերածվում է սիրավեպի: Օրբելին նրանց սիրո պատմությանը զուգահեռում է համաշխարհային գրականության մեջ եղած համանման սիրավեպերի հետ. «Արևմուտքում Տրիստանի և Իզոլդայի, Պատլոյի և Ֆրանչեսկայի, Իրանում Վիսի և Ռամինի, քրդերի մոտ՝ Մամեի և Զինեի մեջ մարմնավորված փոխադարձ հարատև սիրո գաղափարը հայկական էպոսում իր դրսևորումն է գտել հանձինս Դավթի և Խանդութի»:<sup>11</sup>

Խանդութի և Դավթի հավերժական սերը խորհրդանշական հարատևություն ունի: Որպես սիրասուն կին՝ Խանդութը սրտատրոփ սպասում է ամուսնու վերադարձին ու բարձրանում է բերդի տանիքից նայելու: Բոլոր ձիավորները ձիերի վրա նստած շարժվում են, իսկ Դավիթը մի ուրիշ ձի նստած անշարժ է: Խանդութը հասկանում է, որ ամուսինը մեռած է ու ինքնասպան է լինում՝ իրեն ցած նետելով բերդի գլխից.

*Էս անգամ Խանդութ էլավ բերդի գլուխ*

*Ու էնտեղեն իրեն թալեց.*

*Գլուխն առավ վեր քարին, քար ծակեց, էղավ փոս:*

*Էն փոսի մեջ՝ Սասունա կես շնիկ կորեկ*

*Կը լցնեն ու կը ծեծեն սանդի տեղ:*

*Էնոր ծծերի տեղ հիմի էլ էրկու աղբյուր կը թալի:*

*Յոթ ճուղ ծամի տեղ էլ հիմի կ'էրևա,*

*Քանց յոթ սուն կը սևկըտի:*

*Ու հիմի էլ սանդ էնտեղ է, բերդի առաջ (էջ293):*

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ XXII:

Օրբելու կարծիքով մեր ազգային էպոսի ոգուն խորթ միակ կինը Չմշկիկ սուլթանն է, որն իր մեջ մարմնավորում է վրեժխնդրությունը: Չմշկիկ սուլթանի դյուցազնական խառնվածքը դրսևորվում է միայն վրեժխնդրության ձևով: Նա մարտահրավեր է ուղարկում Դավթին՝ նրան ոչնչացնելու, իր խանդին գոհացում տալու նպատակով:

Էպոսի ասացողները դաժանորեն պատժում են այդ կնոջը. նա ընկնում է Քուռկիկ Ջալալու ոտքերի տակ և ջախջախվում.

*-Մենք տ'էրթանք դեհ քաղաք: Գնացին:*

*Մհեր էլավ, Թուր Կեծակին քաշեց,*

*Գնաց խառնվավ գորքին.*

*Աջու էգար, ձախու էգար,*

*Ո՛չ գորք թողեց, ո՛չ գորական,*

*Ինչ որ կար, բոլոր կոտորեց, ասաց.*

*-Էս իմ հոր փոխ:*

*Չմշկիկ Սուլթան բերեց,*

*Ծամեր կապեց Քուռկիկ Ջալալու պոչ.*

*Ձին էնոր ամեն պատառ մեկ էրկիր թալեց,*

*Ծամեր մնացին պոչ (էջ305):*

Չմշկիկ սուլթանի կերպարի ուշագրավ բացատրություն է տվել հայտնի էպոսագետ Կարապետ Մելիք-Օհանջանյանը

«Սասնա ծռեր» էպոսի տասը լավագույն պատումների ուսերեն թարգմանության ծանոթագրություններում:<sup>12</sup>

Նա գրում է. «Некоторые фольклористы полагают, что присутствие Чымшик-султан в армянском народном эпосе является воспоминанием о византийском императоре Иоанне Цимисхие (969-976), по армянский Հովհան Չմշկիկ, который стремился завоевать всю южную и юго-западную Армению. Он вступил в область Тарон и расположился лагерем против крепости Айциц. Все армянские цари и князья, в их числе и княз Сасуна, выступили против него и разбили свой стан в области Харк. Начались переговоры между Иоанном Цимисхием и Ашотом III Багратуни. Иоан Цимисхий, получив от армян вспомогательный отряд в 10000 бойцов, отступил».<sup>13</sup>

Մանուկ Աբեղյանն էլ էպոսի Չմշկիկ Սուլթանի վերաբերյալ ասում է, թե այստեղ սուլթան նշանակում է նաև թագուհի, դշխո, արքայուհի: Չմշկիկ կայսրը մի ժամանակ ունեցել է սիրուհի, որը Ամիդ քաղաքի տերն էր: Ժողովուրդն անգիտակցաբար այս ավանդույթը փոխել է Դավթի վրա՝ կայսեր անունը տալով նրա սիրուհուն: Թե ինչու է Չմշկիկ

---

<sup>12</sup> Տե՛ս Բրայանցի «Մանուկ Աբեղյանի «Սասնա ծռեր» էպոսի տասը լավագույն պատումների ուսերեն թարգմանության ծանոթագրություններում», Երևան, 2004, թ. 344.

<sup>13</sup> Նույն տեղում:

թագավորը դարձել Դավթի նշանածը, այդ պարզ չի, չի էլ կարող պարզվել:<sup>14</sup>

Օրբելին խոսել է նաև ոչ ազնվական մի կնոջ՝ արտատեր պառավի մասին, որը կարևոր դերակատարություն ունի Սասունցի Դավթի կյանքում:

Դավիթը Սասնա պառավի կորեկի արտում որս էր անում, զարկում լոր ու ճնճղուկ: Պառավը բացատրում է, որ պատանուն չի սազում տրորել իր արտը և փոքրիկ թռչուններ որսալ այն դեպքում, որ սարերում լիքն են վայրի ոչխարները, որոնց կարող է որսալ ստանալով իր հոր նետն ու աղեղը. «Դավիթը նետ ու աղեղ է պատրաստում և հրապուրվում է թռչունների որսով: Մտքով էլ չի անցնում, թե տրորում է այն պառավի արտը, որին մի ժամանակ (Դավիթն այդ չգիտեր) սիրել է Մհերը: Տեսնելով, որ իր արտը ոտնատակ է լինում, պառավը պատմում է Մհերի որսասարի մասին»:<sup>15</sup>

Արտատեր պառավի մեջ հայ ժողովուրդը դրել է հայ կնոջ իմաստությունը:

Հովսեփ Օրբելին հստակ ու դիպուկ մեկնաբանել է «Սասունցի Դավիթ» էպոսում գործող կանանց կերպարները՝ նրանց տալով անմոռաց բնութագրականներ:

---

<sup>14</sup> Տե՛ս «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական էպոս, Բիբլիոգրաֆիա, Ներածություն և խմբագրությամբ պրոֆեսոր, դոկտոր Մանուկ Աբեղյանի, Երևան, 1939, էջ XLVIII:

<sup>15</sup> «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ XIII:



**ԳՎՅԱՆԵ ՄԱՐԴՅԱՆ**

*Մանկավարժական  
գիտությունների թեկնածու*

**«ՄԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Ամեն ժողովրդի էպոս ամենակարևորն է ստեղծող ժողովրդի քանահյուսության գանձարանում: Այդպիսին է նաև հայ ժողովրդական հերոսական էպոս «Մասունցի Դավիթը», որին ծանոթանում են տարբեր դասարաններում:

Որպես երկար տարիներ դպրոցում հայոց լեզու և հայ գրականություն դասավանդած ուսուցչուհի՝ հավաստում եմ, որ հայ երեխան սիրով է յուրացնում մեր էպոսի խորունկ գաղափարներն ու հայրենասիրական ոգին: Ամեն ինչ կախված է դասավանդող ուսուցչի վարպետությունից:

Էպոսի ուսուցումը սկսվում է ցածր դասարաններից, և դա տրամաբանական է: Մեծ մտածող, մանկավարժ և գրող Լևոն Շանթը, որը երկար տարիներ զբաղվել է մանկավարժական աշխատանքով, ապագա և գործող ուսուցիչներին հղել է

բազմաթիվ օգտակար պատգամներ: Ահա թե ինչ է ասում նա «Հաջորդականության ընտրությունը» հոդվածում. «Ո՛չ մեկ կարողություն, ոչ մեկ ուսում ու գիտություն ձեռք չի բերվիր մեկ անգամեն, մեկ ջանքով, այլ երկար-երկար ճիգերով, քիչ-քիչ, հետզհետե և կտոր-կտոր, և երբեք ո՛չ մեկ կարողություն, ո՛չ մեկ գիտություն վերջ ու գագաթ չունի իր զարգացման. միշտ կարելի է ավելի ու ավելի կատարելագործել. ինչ որ սովորաբար ավարտել, գագաթնակետ կամ կատարելություն կնկատենք՝ հարաբերական արտահայտություններ են միայն»:¹

Էպոսը ամեն հայի պետք է ուղեկցի նրա կյանքի բոլոր տարիքներում, որովհետև էպոսի ասելիքը ամեն մի ժողովրդի հավաքական մտածողության դարավոր կենսափորձի հիման վրա է առաջացել և ասվել է դարերի համար. այն ուղեցույց է:

Այս ճշմարտությունը գիտակցել է հենց էպոսի առաջին գրառողը՝ Գարեգին Սրվանձտյանցը, որի կատարածը հիմք դարձավ հայ էպոսագիտության զարգացման և նրա մշակումներին համար:

Զարմանալի չէ, որ Գ. Սրվանձտյանցի գրառումից շատ չանցած հայ գրականության մեջ այդ գրառման հիման վրա հանդես եկան էպոսի երկու գրական մշակումներ: Առաջինն այն իրականացրեց Սեդրակ Մանդինյանը (1844-1915), որը մանկավարժ էր, դերասան, գրական ու թատերական գործիչ: Նա երկար տարիներ հայ գրականություն է դասավանդել

---

¹ Լ.Շանթ, Երկերի ժողովածու հինգ հատորով, հ.5, Երևան, 2012, էջ 112:

դպրոցներում և միանգամից կարևորել է էպոսի՝ ազգային ոգին արթուն պահելու հատկանիշը ու իրականացրել նրա մշակումը՝ «Ազգային դյուցազնական աշխարհ» խորագրով:<sup>2</sup>

Երկրորդը Գրիգոր Բալասանյանն էր, որ 1889 թվականին Մոսկվայում տպագրեց «Առյուծաձև Մհեր» երկը՝ այն անվանելով ազգային պոեմա:<sup>3</sup>

Դրանից հետո «Սասունցի Դավիթ» էպոսը բազմիցս մշակվել է: Մշակողներից մեկն էլ եղել է Վանում ծնված, հետագայում Խորհրդային Հայաստանում բնակված և դարձյալ ուսուցիչ Մկրտիչ Խերանյանը (1889-1970), որը 1958թ. հրատարակել է էպոսի մի նոր մշակում՝ «Սասնա տուն» խորագրով:

«Սասունցի Դավիթ» էպոսը դպրոցում դասավանդող ուսուցիչը գիտի, որ հայ բանահյուսության այդ անգին գանձը մեզ է հասել շուրջ 150 տարբերակով և ամենատարբեր վերնագրերով: Այդ վերնագրերից են՝ «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ», «Սասնա ծռեր», «Սասնա տուն», «Թլոր Դավիթ և Մհեր», «Ջոջանց տուն կամ Սասնա ծռեր» և այլն:<sup>4</sup>

Արդի դպրոցի չորրորդ դասարանում «Սասունցի Դավիթ» էպոսն անցնում են ըստ Մկրտիչ Խերանյանի մշակման,

---

<sup>2</sup> «Ազգային դյուցազնական աշխարհ» (Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ), հորինեց Ս. Մանդինյան, Թիֆլիս, 1881:

<sup>3</sup> Տե՛ս Գրիգոր Բալասանյանց, Առյուծաձև Մհեր, Ազգային պոեմա, Մոսկվա, 1899:

<sup>4</sup> Տե՛ս «Սասնա ծռեր», ժողովրդական վեպ, Աշխատությամբ Սարգիս Հարությունյանի, Երևան, 1977, էջ 700:

որը բավականին մոտ է «Մասունցի Դավիթ» համահավաք բնագրին: Ուսուցանվող երկու հատվածներն են՝

1. Դավիթը նախ արթնացնում է Մսրա Մելիքի գորքին, ապա սկսում է սրահարել իր հայրենիքը զավթելու եկած արաբ զինվորներին: Արաբ ծերունին Դավթին խորհուրդ է տալիս սուրն ուղղել պատերազմը սանձազերծած Մելիքի դեմ:

2. Դավիթը հաղթում է Մելիքին ու ազատ արձակում Մսրա գորքին՝ սաստելով, որ այլևս երբեք ոտք չդնեն Սասնա հողին՝ այն նվաճելու նպատակով: Խերանյանի մշակման հետևյալ երկու հատվածները գրեթե նույնությամբ կան և՛ համահավաք բնագրում և՛ Հովհաննես Թումանյանի մշակման մեջ: Այդ հատվածներն են՝

*Մկրտիչ Խերանյան*

Հեյ-հե՛յ լսե՛ք, վեր կացեք, վե՛ր,

Մսրա գորքեր.

Ի՞նչ եք քնել խորունկ էդպես՝

Մեռելի պես:

Ելե՛ք, իսկույն զե՛նք կապեցեք,

Ձի թամբեցեք, ելեք հեծե՛ք,

Հետո չասեք.

Թե Դավիթը սուրն անխնա

Քաշեց քնած գորքի վրա:<sup>5</sup>

---

<sup>5</sup> Դավիթ Գյուրջիյան, Նարինե Հեքեքյան, Մայրենի 4, Երևան, 2010, էջ 43:



**«Մասունցի Դավիթ» (համահավաք բնագիր)**

Գնաց, էլավ Լեռնա սարի գլուխ, կանչեց.-«Էհե՛յ,  
Ով քրնած է՝ արթուն կացեք,  
Ով արթուն է՝ ձիեր թամբեք,  
Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,  
Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք.  
Չասեք Դավիթ գող-գող էկավ,  
Գող-գող զրնաց»:<sup>6</sup>

**«Մասունցի Դավիթ» (Հովհաննես Թումանյան)**

-Ով քնած էք՝ արթուն կացե՛ք,  
Ով արթուն էք՝ էլե՛ք, կեցե՛ք,  
Ով կեցել էք՝ զենք կապեցե՛ք  
Ձենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,  
Ձի եք թամբել՝ էլե՛ք, հեծե՛ք.  
Հետո չասեք՝ թե մենք քրնած-  
Դավիթ գող-գող էկավ, զրնաց...<sup>7</sup>

Երկրորդ հատվածը կապվում է էպոսի այն դրվագի հետ, երբ Մելիքը խաբում է Դավթին և հյուրասիրության պատրվակով նրան զցում հորը: Մկրտիչ Խերանյանի մոտ այդ հետևյալ չափածո տեսքով է.

-Դավի՛թ,-ասաց,-արի՛, նստենք,  
Դեռ հա՛ց ուտենք իմ վրանում,

---

<sup>6</sup> «Մասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 235:

<sup>7</sup> Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 4, Երևան, 1991, էջ 29:

Հետո կելնենք, կռիվ կանենք,

Եթե կռվել ես կամենում:

-Չե՛մ նստի ես քո սեղանին

Քեզ հետ, Մելի՛ք, հաց չեմ կիսի,

Չես կարող ինձ խաբել կրկին

Այդ խոսքերով քո աղվեսի(Էջ 46):

Արդեն չորրորդ դասարանի աշակերտին ուսուցիչը բացատրում է, թե որքան տարբեր են Մսրա Մելիքն ու Սասունցի Դավիթն իրենց մարդկային նկարագրով: Առաջին հատվածից երևում է Դավթի ազնվությունը, մեծահոգությունը, ապետական նկարագիրը: Նա երբեք չի հարձակվի քնած գորքի վրա, այդօրինակ արարքը հատուկ է ստոր ու վախկոտ մարդկանց: Մինչդեռ Մսրա Մելիքը հատուկ փոս էր պատրաստել՝ Դավթին թակարդը գցելու համար: Հայ ժողովուրդն իր նկարագրով մերժում է նենգությունն ու ստորությունը, որովհետև երբեք չի նվաճել ուրիշներին և ապրել է քրիստոնեական սրբազան մատյանի պատվիրաններով:

Այս նույն հատվածների վրա IX և X դասարանների աշակերտների ուշադրությունը հրավիրելիս ուսուցիչը կարող է անդրադարձ կատարել 1915 թվականի երիտթուրքերի կազմակերպած հայոց ցեղասպանության վրա, որի ժամանակ նահատակվեցին մեկ ու կես միլիոն հայեր: Այստեղ տեղին է հիշել նշանավոր հայագետ և մեծ հայասեր Ֆրեդերիկ Ֆեյդիի զեկուցումը, որը նա կարդացել է 1965 թվականի նոյեմբերի յոթին Բրյուսելի Թագավորական Ակադեմիայում՝ հայոց ցեղասպանության հիսունամյա տարեդարձին նվիր-

ված հիշատակի արարողության ժամանակ: «Ֆեյդին նկատում է, թե ոմանք անվանարկում են հայերին 1915 թվականի ջարդերի առանձին դրվագներում, ասելով, թե նրանք նահատակվեցին ու մահ գտան, որովհետև չուրացան ո՛չ իրենց հայրենասիրական գաղափարները և ո՛չ էլ կրոնը: Մի՞թե նրանք՝ այդպես ասողները, չեզրակացրին, որ այդ ժողովուրդը գերագույն նվիրվածություն ունի իր ազգային գաղափարներին ու բնավորությանը: Այդ երկու գծերն են, որ մարդուն դարձնում են մարդ, և ժողովրդին՝ ազգ»:<sup>8</sup>

«Մասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրն անցնում են IX դասարանում:<sup>9</sup> Սա փաստորեն մեր ազգային էպոսի հետ ծանոթանալու հիմնական յուրացման առաջին ու կարևոր քայլն է, որը ներկայացնում է հայ էպոսագիտության սկզբնավորումը, նրա անցած ճանապարհը, զանազան պատումների գրառումները և դրանց հիման վրա ակադեմիկոս Օրբելու խմբագրությամբ 1939 թվականին համահավաք բնագրի ստեղծումն ու հրատարակումը: Բնականաբար խոսք է ասվում էպոսի պատմական հիմքի, գաղափարական հարստության, կերպարների համակարգի, բառապաշարի շերտերի ու արվեստի մասին:

IX դասարանը հասուն ու զարգացած աշակերտին մատուցում է առավել գիտական մեկնաբանություններ, որոնց միջոցով վերջինս ծանոթանում է միջնադարյան մտածո-

---

<sup>8</sup> Ա. Դուրլիսանյան, Ֆրեդերիկ Ֆեյդին հայագետ, Երևան, 2008, էջ 141:

<sup>9</sup> Տե՛ս Դավիթ Գասպարյան, Գրականություն, 9-րդ դասարան, Երևան, 1913, էջ 69-115:

դությանը խիստ հատուկ խորհրդանիշներին, հասկանում հրաշապատում հեքիաթների ու էպոսի աղերսները: Բացատրվում են դների, վիշապների խորհրդանիշները:

IX դասարանում ուսուցիչը աշակերտներին տանում է դիտելու հանճարեղ քանդակագործ Երվանդ Քոչարի կերտած Սասունցի Դավթի արձանը, որը փառահեղորեն կանգնած է Երևանի կայարանամերձ հրապարակում: Այն կանգնեցվել է 1959 թվականին ու համարվում է Երևանի տեսարժան վայրերից:

Երվանդ Քոչարի մեջ Սասունցի Դավթի նկատմամբ մեծ հետաքրքրությունն արթնացրել է Ավետիք Իսահակյանը Փարիզում: Այդ մասին վկայում է Վարպետի որդին՝ Վիգեն Իսահակյանն իր հուշերում. «Երվանդը հիշեց հորս Փարիզում սված խորհուրդը. «Կարդա «Սասունցի Դավիթը» և միգուցե դու նրա մոտիվներով նոր գործեր արարես», և նոր թափ առած, ոգևորված անցավ գործի: Երբեմնի գորեղ փարիզյան 1930-32թթ. «մուսան» վերադառնում էր քանդակագործին»:<sup>10</sup> Տեղին է նշել. «Սասունցի Դավիթ» էպոսի հորեյանական հրատարակության նկարագարդումը ակադեմիկոս Հովսեփ Օրբելին հանձնարարում է Երվանդ Քոչարին:

Երևանում աշխատող ուսուցիչները պարտավոր են իրենց IX և X դասարաններում սովորող աշակերտներին ցուցադրելու ոչ միայն Սասունցի Դավթի արձանը, այլև նրանց հետ այցելելու Երվանդ Քոչարի թանգարանը, որտեղ ցուցադրված են էպոսի նկարագարդման բնօրինակները: Սա

---

<sup>10</sup> Վ. Իսահակյան, Փարիզ, Քոչար, Անցած օրեր..., Երևան, 2006, էջ 241:

ներառարկայական և միջառարկայական կապերի կարևոր նախաձեռնություն է: Էպոսը կրացատրվի նաև արվեստի լեզվով, տեսողականն առավել կամրապնդի գիտելիքը, կհարստացնի աշակերտի հոգևոր աշխարհը. «Քոչարն իր արվեստով, փաստական ապացույցներով լուսավորեց այս հասարակությանը, ցույց տվեց, որ Հայաստանն ունեցել է մեծ անցյալ, էպոս, պատմություն, կայսրություն, կուլտուրա և արվեստ»:<sup>11</sup>

Հայ ժողովրդական բանահյուսության հյուսվածքներում ակնհայտ է մարդու վաղնջական մտածողության այնպիսի դրսևորումներ, որոնք իրական կյանքի օրինաչափությունները խախտում են, և անհնարինը դարձնում են հնարավոր: «Սասունցի Դավիթ» էպոսում էլ խախտված են ժամանակի ու տարածության սովորական հասկացությունները: Քուռկիկ Ջալալին նորածին Դավթին ակնթարթային արագությամբ Սասունից հասցնում է Մար, ուր մանուկ Դավիթը մեծանում է արագությամբ: Կամ՝ իր աղջկա ձեռքով նետահարված Դավիթն այնպիսի ձայն է արձակում, որ բազում մղոններ հեռու լսում է Ձենով Օհանը: Էպոսի մի քանի հերոսներ կենդանի են բոլոր ճյուղերում և գործուն մասնակցություն ունեն չորս գլխավոր հերոսների կյանքում: Դրանցից է Քեռի Թորոսը, որն էպոսի առաջին ճյուղում տասնյոթ-տասնութ տարեկան է, գործում է բոլոր ճյուղերում և վախճանվում է էպոսի վերջում՝ «Վերջերգից» առաջ.

Քեռի Թորոս կսկծուց մեռավ,

---

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 242:

Որ իմացավ Մհերի փակվել:<sup>12</sup>

Ժամանակը խախտված է նաև «Վերջերգում»։ Փոքր Մհերը փակվում է Ագոավաքարում և մնում անմահ։ Նա քարից դուրս կգա միայն այն ժամանակ, երբ հին ու անարդար աշխարհը քանդվի և նրա փոխարեն ստեղծվի նորն ու արդարը, և իրականանա մարդկության բարեկեցիկ ապրելու երազանքը։ Աշակերտներին բացատրվում է, որ մինչև հիմա էլ կա Մհերի դուռը, և մարդիկ հավատացել են, որ այդ հսկա, հրաշալիորեն տաշված ու դռան տեսք ունեցող քարե դռան հետևում դեռ կենդանի են Մհերն ու Քոռվիկի Ջալալին։ Մհերի դուռը բազմիցս նկարված է, և ուսուցիչը ցուցադրում է այն համակարգչի վրա կամ լուսանկարով։

Շատ կարևոր է աշակերտին բացատրել, թե «Սասունցի Դավիթ» էպոսում կան բազմաթիվ հնագույն հավատալիքների և հին հասարակարգերի հետքեր։ Ինչպես Հովսեփ Օրբելին է նկատել՝ էպոսը պահպանել է մայրիշխանության որոշակի հետքեր։ «Սասունցի Դավիթ» էպոսի կրոնական հիմնական ուղղվածությունը կապվում է քրիստոնեության հետ։ Սասնա բոլոր դյուցազուններն իրենց թևի վրա ունեն խաչ պատերազմին, որը նրանց թևին իջնում է Աստծու հրամանով ու ամեն անգամ օգնում է Սասնա դյուցազուններին՝ նրանց արդարացի կռվում։

Ասաց.-Հրողբե՛ր,

Տու՛ր ինձ Մհերի Խաչ Պատերազմին։

Հրողբերն ասաց.-Ես չե՛մ կարնա տա,

---

<sup>12</sup> «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ 318։

Թե արժան էս՝ կը գա քո թևին,  
Թե արժան չես՝ չի գա քո թևին:  
Էդտեղ աստծու հրամանով

Խաչ Պատերազմին իջավ վեր աջ թևին:<sup>13</sup>

IX դասարանի դասագրքում կան նաև «Սասունցի Դավիթ» էպոսի I, III, IV ճյուղերից կարևոր հատվածներ, որոնք եզրափակվում են «Վերջերգով»: Նույն գրքում զետեղված են նաև Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի XIV, XV, XVI, XXIV հատվածները:

Մանկավարժական և գրականագիտական առումով համահավաք բնագրի և թումանյանական մշակման հատվածների համադրումը խիստ նպատակային է: Հովհաննես Թումանյանը շատ մեծ տեղ էր հատկացնում գրականությանը ապագա քաղաքացի դաստիարակելու գործում: Նրա «Դպրոց և գրականություն» հոդվածում կարդում ենք. «Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը դպրոցի բովանդակությունը, երկուսը միացած են պայծառ ու լուսավոր ուժով, որով հզոր ու անխորտակելի են դառնում ժողովուրդները ու մտնում են կուլտուրական ազգերի եղբայրության մեջ»:<sup>14</sup> Մեծ գրողը շահագրգիռ էր հայ դպրոցի առաջընթացի խնդիրներում ու երագում էր, որ ամեն հայ աշակերտի հոգում համատեղվեն ազգայինն ու համամարդկայինը: Նա այդ համատեղումը տեսավ «Սասունցի Դավիթ» էպոսում, որը մշակեց հա-

---

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 227:

<sup>14</sup> Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 7, Երևան, 1995, էջ 51:

տուկ երեխաների համար:<sup>15</sup> Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» էպոսն առաջին անգամ լույս է տեսել 1903 թվականին: Այն գրելու համար բանաստեղծն օգտագործել է հետևյալ աղբյուրները.

«1.Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ, Սրվանձտյանցի, Կ.Պոլիս,1874.

2. Դավիթ և Մհեր.Մ.Աբեղյան. Շուշի,1889.

3.Սասմա ծոեր. Գարեգին սարկավազ. Թիֆլիս, 1892.

4.Սասմա փահլևաններ կամ Թլոր Դավիթ և Մհեր. Բ. Խալաթյան,Վաղարշապատ, 1899: Հ.Թ.»:<sup>16</sup>

Բանաստեղծը ելնելով իր նպատակադրումից, իր մշակման մեջ բաց է թողել էպոսի ժողովրդական տարբերակից բազմաթիվ մանրամասներ, որոնք ուսուցողական նպատակներով հարմար չէին մատուցել երեխաներին: Այդ մանրամասներից էին Խանդութի ու Դավթի սիրո պատմությունը: Թումանյանի Դավիթը ազգային հերոսի կատարելատիպ է, որի մարդասիրությունն ու ազգասիրությունը լիովին տեղավորվում են քրիստոնեական կրոնի պատվիրանների տիրույթում: Թումանյանի Դավիթը գրեթե բառացի կրկնում է նույն նախազգուշացումը՝ ուղղված թշնամու զորքին, որին ձեռք չի տալիս ու ազատ է արձակում.

Դարձե՛ք եկած ճանապարհով,

Ձեր հայրենի հողը Մըսրա.

Բայց թե մին էլ զենք ու զոռով

---

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 252:

<sup>16</sup> Հովհ. Թումանյան, ԵԼԺ, հ. 4, էջ 521:



Վեր եք կացել դուք մեզ վրա,  
Հորում լինեն քառասուն գազ խոր,  
Թե ջաղացի քարի տակին,-  
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր,  
Սասնա Դավիթ, Թուր-Կեծակին:  
Էն ժամանակ աստված գիտի,  
Ով մեզանից կըլնի փոշման.  
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,  
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...<sup>17</sup>

Աշակերտներին բացատրվում է, թե որքան ներդաշն են հայ հերոսական էպոսի և Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմի մարդասիրական ու հայրենասիրական գաղափարները: Մեծ բանաստեղծը հայ ազգային էպոսի խաղաղասիրական գաղափարախոսությունը հղում էր աշխարհի բոլոր նվաճողներին՝ մարդկությանը տալով եզակի ու կենսական դաս՝ լինել միմյանց հետ բարեկամ և ոչ թե թշնամի:

X դասարանում հայ աշակերտին ուսուցանվում է «Սասնա ծռեր» դյուցազներգությունը: Նույնիսկ փորձ է արվում «Սասունցի Դավիթ» համահավաք բնագրի նոր, ավելի խորացված յուրացման կողքին ծանոթացնել էպոսի երկու այլ պատումների կամ տարբերակների հետ: Նշվում է «Սասնա ծռեր» էպոսի հանդես գալը Արևմտյան Հայաստանում՝ հատ-

---

<sup>17</sup> Նույն տեղում, 39-40:

կապես Սասունի, Տարոնի, Մոկսի և նրանց հարակից գավառներում:<sup>18</sup>

Այս դասարանում աշակերտը դասագրքից յուրացնում է «Սասնա ծռեր» էպոսի չորս ճյուղերի գլխավոր դեմքերի՝ Սանասարի ու Բաղդասարի, Մեծ Մհերի, Սասունցի Դավթի և Փոքր Մհերի կերպարների վերլուծական բնութագրերը: Առավել ընդարձակ ձևով են մատուցվում էպոսի գաղափարաբանությունը և ներկայացվում էպոսի լեզվառճական առանձնահատկությունները:

Դավթի կերպարն ավելի բնական ձևով ընկալելու համար դասագրքի հեղինակները «Հարցեր և առաջադրանքներ» բաժնում գետեղել են «Մարդկային ի՞նչ թուլություններ ուներ Դավիթը» հարցադրումը:

«Սասունցի Դավիթ» էպոսի չորրորդ ճյուղն առանձնացված մշակել է Ավետիք Իսահակյանը՝ իր այդ երկի վրա աշխատելով երկար տարիներ: Վարպետը գրում է. «Շատ վաղ ժամանակից սասունցիների էպոսը զբաղեցրել է իմ երևակայությունը: Հատկապես Մհերի պատկերը գրավել է ինձ իր դեմոկրատական և հեղափոխական տրամադրություններով»:<sup>19</sup>

Իսահակյանը մի առանձին սեր ուներ տարբեր ժողովուրդների էպոսների նկատմամբ: Նրանց մեջ որոշակիորեն առանձնացնում էր ամեն մի ժողովրդի ազատասիրական ձգտումներն ու ատելությունը դեպի օտար նվաճողները:

---

<sup>18</sup> Վ.Ներսիսյան, Լ.Մնացականյան, Հայ գրականություն, 10, Երևան, 2009, էջ 40:

<sup>19</sup> Ավ.Իսահակյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1974, էջ 310:

Շառլ դը Կոստերի «Թիլ Ուլենշպիգել» նիդեռլանդական էպոսի հայերեն թարգմանության առաջաբանում Ավ. Իսահակյանը գրում է. «Թիլը դառնում է ժողովրդի ազատության ձգտումների ու ոգորումների մարմնացումը»:<sup>20</sup> Նա ծանոթ է «Թիլ Ուլենշպիգելի» ֆրանսերեն առաջաբանին, որը գրել է հայ ժողովրդի մեծ բարեկամ, ֆրանսիական գրականության փառքերից մեկը՝ Ռոմեն Ռոլանը(1866-1944):<sup>21</sup> Իսահակյանը գրում է. «Ռոմեն Ռոլանն ասում է, որ այս գիրքը էպիկական ձայնն է ազատության»:<sup>22</sup>

Ռոլանն իր ֆրանսերեն առաջաբանում հիշեցնում է Թիլի լեգենդի հետևյալ խոսքերը. «Որոյակ, մի՛ գրկիր երբեք ոչ կենդանուն, ոչ մարդուն ազատությունից, որն աշխարհի ամենամեծ բարիքն է»<sup>23</sup> («Fils, n'ôte jamais à home ni bete sa liberté, qui est le plus grand bien de ce monde!...»):

Այս նույն միտքը կա «Սասունցի Դավիթ» էպոսում.

Դավիթ քացի մ'տվեց, պատեր զամեն քանդեց:

Իր կապան հանեց, թալեց էրկինք վե՛ր ասաց.

-Հոյ-հո՛յ... Ամեն զազաններ փախան:

Ասաց.-Գնացե՛ք, ձեզի համար ապրե՛ք:<sup>24</sup>

---

<sup>20</sup> Շառլ դը Կոստեր, Ուլենշպիգելի և Լամե Գուդգակի լեգենդը, Երևան, 1987, էջ 6:

<sup>21</sup> Ռոմեն Ռոլանն իր «Ժան Քրիստոֆ» երկի համար 1916թ. արժանացել է Նոբելյան մրցանակի-Գ.Մ.:

<sup>22</sup> Շառլ դը Կոստեր, Ուլենշպիգելի և Լամե Գուդգակի լեգենդը, էջ 8:

<sup>23</sup> Charles De Coster, La Légende et les aventures héroïques, joyeuses et glorieuses d'Ulenschpigel et de Lamme Goedzak, Moscou, 1973, p. 22.

<sup>24</sup> «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, էջ 189:

Իսահակյանի էպոսի մշակումը ներկա ավագ դպրոցներում այլևս չեն անցնում, սակայն հեղինակին տրվում է տասներկու ժամ և առաջին թեման է՝ «Ավետիք Իսահակյանի կյանքն ու ստեղծագործության ընդհանուր բնութագիրը»:<sup>25</sup> Հենց այս առաջին ժամին ուսուցիչը կարող է կապ հաստատել Գ. Սրվանձտյանցի գրառման, «Սասունցի Դավիթ» պոեմի և Ավ.Իսահակյանի «Մասմա Մհեր» երկի միջև:

Ինչպես ապացուցեց հայ ժողովրդի դարավոր պատմության այսօրը, «Սասունցի Դավիթ» էպոսի գաղափարներն արդիական են, և նրանց ուսուցումը հայկական դպրոցի տարբեր դասարաններում խիստ պարտադիր է:

---

<sup>25</sup> Տե՛ս Լ.Տոդանյան, Թ.Թովմասյան, Լ. Գրիգորյան, Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար, Երևան, 2012, էջ 82:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ -----	5
ПРЕДИСЛОВИЕ -----	8
PREFACE -----	10
<b>ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ</b>	
ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼԻՆ	
«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԳՆԱՀԱՏՈՂ -----	12
<b>ԼԻԼԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ</b>	
ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹԻ ՏԱՐԲԵՐԸ	
«ՍԱՍՆԱ ԾՈՒԵՐ» ԷՊՈՍՈՒՄ -----	22
<b>ՊԱՐՈՒՅՐ ՍԱՀԱԿՅԱՆ</b>	
«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍՆ ՈՒ	
ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ -----	43
<b>ՌՈՒԶԱՆ ԴՈԼՈՒԽԱՆՑԱՆ</b>	
«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԿԱՆԱՆՑ	
ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՀԵՐՄԵՆԵՎՏԻԿԱՆ ԸՍՏ Հ.ՕՐԲԵԼՈՒ -----	60
<b>ԳԱՑԱՆԵ ՍԱՐԴՅԱՆ</b>	
«ՍԱՍՈՒՆՅԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ	
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏԱՐԲԵՐ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ -----	72